

«05» նոյեմբեր 2020թ.

No 3896 - Լ

«ՅԱՆԻԼԻՍ (ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԻՊՈՔԼՈՐԻԴ 6,25 %)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25%)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՅԱՆԻԼԻՍ (ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԻՊՈՔԼՈՐԻԴ 6,25 %)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց)՝ իրենից ներկայացնում է քլորի և բուրանյութի հոտով բաց դիդիինից մինչև կանաչա-դեղնավուն գույնի թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութ այն պարունակում է նատրիումի հիպոքլորիդ (միջոցում դրա պարունակությունը ըստ ակտիվ քլորի 6,25 % է): Բացի այդ, միջոցը պարունակում է կայունացնող նյութեր, կոռոզիայի արգելակիչ, համալիր կազմող և լվացող (մակերեսային ակտիվ նյութեր) հավելումներ, բուրանյութ, ջուր: Միջոցի pH-ը $11,5 \pm 1,5$ է:
2. Միջոցը թողարկվում է ամուր փակվող պտուտակային կափարիչերով 0,2-ից մինչև 40 դմ³ տարողությամբ պոլիմերային տարաներով, 50, 100, 200 դմ³ տարողությամբ պոլիմերային տակարներով:
3. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փակ փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) 2 տարի է՝ պաթեթավորման հերմետիկության պահպանման և պահպանման պահանջվող պայմանների ապահովմամբ:
4. Աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը 14 օր է՝ արևի ուղիղ ճառագայթներից հեռու սենյկային ջերմաստիճանի պայմաններում փակ ապակյա, պլաստմասե կամ էմալապատ (առանց ներքին մակերեսի ամբողջականության խախտման) կափարիչով փակվող տարայում պահպանման դեպքում:

5. Թափանցիկ կամ ոչ հերմետիկ փակվող տարաներում պահելու դեպքում աշխատանքային լուծույթը փոխվում է ոչ պակաս քան 24 ժամը մեկ:
6. Սինթետիկ լվացող միջոցների ավելացման դեպքում (օրինակ, սպիտակեղենի լվացման ժամանակ) լուծույթները չեն պահվում երկար և օգտագործվում են սույն հրահանգին համապատասխան պատրաստելուց անմիջապես հետո:
7. Սույն հրահանգին համապատասխան միջոցի աշխատանքային լուծույթն օգտագործելու դեպքում այն ունի սպիտակեցնող, լվացող (հիմնային և մակերեսային ակտիվ նյութերը) հատկություններ, չունեն կորոզիոն հատկություններ, չեն վնասում մետաղներից պատրաստված գործիքները:
8. Միջոցը և դրա աշխատանքային լուծույթները դյուրավառ չեն, հրդեհա- և պայթյունաանվտանգ են:

2. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

9. Աշխատանքային լուծույթներին օժտված են մանրէասպան (ազդում են գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում՝ ներհիվանդանոցային վարակների հարուցիչների վրա), տուբերկուլոցիդ ազդեցությամբ (թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա), վիրուսասպան (մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ հեպատիտներ Ա-ն, Բ-ն և Ց-ն), ՄԻԱՎ-ի, պոլիոմիելիտի նկատմամբ), սնկասպան, օվոցիդ հատկություններով: Բացի այդ, միջոցն օժտված է հակաբորբոսային ակտիվությամբ, ազդում է հատուկ վտանգավոր վարակների (խոլերա, տուլարեմիա, բրուցելոզ, սիբիրյան խոց), ինչպես նաև անաէրոբ վարակների հարուցիչների վրա:

3. ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

10. Միջոցի խտանյութն ըստ թունաբանական ցուցանիշների, ԳՈՍՍ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս և մաշկի վրա լցվելիս պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին:
11. Հագեցած գոլորշիների խտություններում միջոցը և դրա աշխատանքային լուծույթները ներշնչական (ինհալացիոն) ազդեցության ժամանակ պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, որովայնի խոռոչ ներմուծելիս՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման՝ պրակտիկորեն ոչ թունավոր նյութերի 5-րդ դասին: Ցողելու

Ժամանակ միջոցն առաջացնում է շնչառական օրգանների և աչքերի լորձաթաղանթների չափավոր գրգռվածություն: Այն օժտված չէ գերզգայունացնող հատկություններով:

12. Աշխատանքային լուծույթները մաշկի հետ մեկանգամյա շփման ժամանակ չունեն գրգռող և գերզգայունացնող ազդեցություն; բազմակի շփման ժամանակ առաջացնում են մաշկի չորություն, ցողելու ժամանակ առաջացնում են շնչուղիների և աչքերի լորձաթաղանթների գրգռում:

13. Սրբելու, ընկղմելու և թրջելու եղանակներով բոլոր տեսակի օբյեկտների մշակումը կարելի է իրականացնել պացիենտների ներկայությամբ:

14. Ոռոգման եղանակով մշակումն իրականացվում է պացիենտների ներկայությամբ՝ մաշկի, աչքերի, շնչարական օրգանների անձնական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) կիրառմամբ:

15. Աշխատանքային գոտու օդում քլորի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ)-ն կազմում է 1 մգ/մ³; մթնոլորտային օդում ՍԹԽ-ն միանվագ մակսիմալը՝ 0,1 մգ/մ³ է, միջին օրականը՝ 0,03 մգ/մ³:

16. Միջոցը նախատեսված է բոլոր տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություններ)՝ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, վերականգնողական կենտրոններ, ցերեկային ստացիոնարներ, բուժսանմասեր և բժշկական կետեր, հեմոդիալիզի բաժանմունքներ, բուժակ-մանկաբարձական կետեր, դիսպանսերներ, հոսպիտալներ, ծննդատներ, նորածնային հիվանդասենյակներ, օրգանների փոխպատվաստման կենտրոններ, ատամնաբուժական կաբինետներ, արյան փոխներարկման կայաններ և բաժանմունքներ և այլն; գիտական և փորձարարական լաբորատորիաներում (կլինիկական, միկրոկենսաբանական, ախտաբանա-անատոմիական, իմունաբանական, ախտորոշիչ, ՊՇՌ և այլ լաբորատորիաներ, այդ թվում՝ ախտաբանության 3-4 խմբի միկրոօրգանիզմների հետ աշխատող); ախտահանման կայաններում, վարակիչ հիվանդների օջախներում, կենցաղ-տնտեսային, սոցիալ-մշակութային ոլորտի, ֆիզկուլտուրայի և սպորտի օբյեկտներում (հյուրանոցներ, հանրակացարաններ, բաղնիքներ, շոգեբաղնիքներ (սաունաներ), վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ, սոլյարիներ, պիրսինգի և դաջվածքի

սրահներ, ոտնա- և մատնահարդարման սրահներ, կոսմետոլոգիական կաբինետներ, ՍՊԱ-սրահներ, առողջարաններ, հանգստյան տներ, միջամտությունների կաբինետներ, ֆիզիո- և ջրաբուժարաններ, բժշկական կոսմետոլոգիայի բաժանմունքներ, ազգաբնակչության ջրա-, գազա- և էլեկտրամատակարարման օբյեկտներ, կինոթատրոններ, թանգարաններ, գրադարաններ, առևտրի կենտրոններ, գրասենյակներ, ֆինանսական կազմակերպություններ և այլն); հասարակական այլ վայրերում, ներառյալ հասարակական և վարչական սենքեր, հասարակական զուգարաններ, այդ թվում՝ բիոզուգարաններ; սանթոդարաններում, հանրային սննդի կազմակերպություններում (ռեստորաններ, սրճարաններ, ճաշարաններ, բարեր, բուֆետներ, սննդի բլոկեր, մթերքի նախապատրաստման սենքեր և այլն), սննդի արդյունաբերության և առևտրի ոլորտի կազմակերպություններում; դեղատներում (ներառյալ դեղ պատրաստող, դեղատնային կրպակներ, դեղերի պահեստներ), քիմիկա-դեղագործական, բիոտեխնոլոգիական, օժանելիքա-կոսմետիկական արդյունաբերության (բացի Ա դասի ստերիլ պայմաններով) կազմակերպություններում; այլ արտադրական և պահեստային սենքերում (այդ թվում հացահատիկի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների, թղթային արխիվներ, գրադարանային սենքեր և այլն); սպառողական և արդյունաբերական շուկաներում, մանկական, կրթական կազմակերպություններում (մանկապարտեզներ, դպրոցներ, միջնակարգ մասնագիտացված ուսումնական հաստատություններ, ԲՈՒՀ-եր, լրացուցիչ կրթության հատուկ հաստատություններ, ծնողագուրկ երեխաների հատուկ հաստատություններ, մանկատներ, դպրոց-ինտերնատներ, մանկական առողջարաններ և այլն); սոցիալական ապահովման հաստատություններում (հոսփիսներ, պալիատիվ խնամքի կենտրոններ և բաժանմունքներ, քույրական խնամքի բաժանմունքներ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ, անօթևանների գիշերային կացության տներ և այլն); քրեակատարողական հիմնարկներում; դատաբժշկական կազմակերպություններում, հուղարկավորության արարողությունների կազմակերպման հաստատություններում (դիակիզարաններ, կոլումբարիումներ և այլն), Պաշտպանության բանակի, Ներքին գործերի և Արտակարգ իրավիճակների նախարարությունների կազմակերպություններում, տրանսպորտում (սանիտարական տրանսպորտ, այդ թվում շտապ օգնության մեքենաների, սննդամթերքի և սննդի

հումքի տեղափոխման, քաղաքային վերգետնյա և էլեկտրական ուղևորափոխադրման, բեռնափոխադրման, երկաթուղու, ավտոտրանսպորտային ընկերությունների); մաքրող կազմակերպությունների կողմից մաքրման աշխատանքներ իրականացնելիս; մարդկանց մասսայական կուտակումների վայրերում և համաճարակային նշանակություն ունեցող այլ օբյեկտներում, որոնց գործունեությունը պահանջում է ախտահանման աշխատանքների իրականացում՝ գործող իրավական ակտերի պահանջների համաձայն, ինչպես նաև ազգաբնակչության կողմից կենցաղում:

4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

17. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են էմալապատ (առանց մակերեսի ամբողջականության խախտման), ապակյա կամ պլաստմասե տարաներում՝ «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» միջոցի խտանյութին ավելացնելով խելու ջուր՝ աղյուսակ 1-ում ներկայացված սխեմայով.

Աղյուսակ 1.1

«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտություն		«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» միջոցի և ջրի (մ) քանակը՝ համապատասխան ծավալով աշխատանքային լուծույթ պատրաստելու համար					
Ըստ միջոցի, %	Ըստ ակտիվ լուծի, %	1 լիտր		5 լիտր		10 լիտր	
		միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,16	0,01	1,6	998,4	8	4992	16	9984
0,32	0,02	3,2	996,8	16	4984	32	9968
0,4	0,025	4	996	20	4980	40	9960
0,48	0,03	4,8	995,2	24	4976	48	9952
0,8	0,05	8	992	40	4960	80	9920
1,6	0,1	16	984	80	4920	160	9840
3,2	0,2	32	968	160	4840	320	9680
4,0	0,25	40	960	200	4800	400	9600

4,8	0,3	48	952	240	4760	480	9520
8,0	0,5	80	920	400	4600	800	9200
12,0	0,75	120	880	600	4400	1200	8800
16,0	1,0	160	840	800	4200	1600	8400
32,0	2,0	320	680	1600	3400	3200	6800
48,0	3,0	480	520	2400	2600	4800	5200

Ապակյա տարաներում աշխատանքային լուծույթը երկարատև պահելիս կարող է առաջանալ լուծույթի պղտորում:

Աղյուսակ 1.2

Լվացքատներում սպիտակեղենի ախտահանման/սպիտակեցման նպատակով
«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» միջոցի աշխատանքային լուծույթների
պատրաստման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտություն		«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» միջոցի և ջրի (մլ) քանակը՝ նշված քաշով սպիտակեղենի ախտահանման/սպիտակեցման համար					
		1 կգ		5 կգ		10 կգ	
Ըստ միջոցի, զանգվ. %	Ըստ ակտիվ քլորի, զանգվ. %	միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,4	0,025	20	4980	100	24900	200	49800
0,8	0,05	40	4960	200	24800	400	49600
1,6	0,1	80	4920	400	24600	800	49200
3,2	0,2	160	4840	800	24200	1600	48400
4,0	0,25	200	4800	1000	24000	2000	48000
4,8	0,3	240	4760	1200	23800	2400	47600
8,0	0,5	400	4600	2000	2300	4000	46000
16,0	1,0	800	4200	4000	21000	8000	42000

«Ակտրվ քլորի» ցածր քանակությամբ խտնյութից «Յանիլիս (նատրիումի
հիպոքլորիդ 6,25 %)-» լուծույթի պատրաստում

18. Եթե տեղափոխման և պահպանման ժամանակ ջերմաստիճանի տատանումների հետևանքով «ակտիվ քլորի» քանակը ցածր է նորմայից, ապա նախքան աշխատանքային լուծույթների պատրաստումը թույլատրվում է օգտագործել ստրև ներկայացված մեթոդաբանությամբ հաշվարկված միջոցի և խմելու ջրի ծավալների հաշվարկային տվյալները:

19. «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ն» ոչ ստանդարտ միջոցից աշխատանքային լուծույթի պատրաստումը հնարավոր է միայն լաբորատոր հետազոտությունների իրականացման դեպքում.

- 1) որոշվում է միջոցի խտությունը սույն հրահանգում նկարագրված եղանակով;
- 2) որոշվում է «ակտիվ քլորի» փաստացի քանակը միջոցի մեջ՝ սույն հրահանգում նկարագրված եղանակով;
- 3) իրականացվում է խտանյութի և ջրի ծավալների անհրաժեշտ հաշվարկներ (1) և (2) բանաձևերով.

$$V_{\text{խտ}} = \frac{m_{\text{աշխ.լուծ.}} \cdot w_{\text{աշխ.լուծ.}}}{w_{\text{խտ}} \cdot P_{\text{խտ}}} \quad (1)$$

$$V_{\text{ջրի}} = \frac{(m_{\text{աշխ.լուծ.}} - V_{\text{խտ}} \cdot P_{\text{խտ}})}{P_{\text{ջրի}}} \quad (2),$$

Որտեղ

$V_{\text{խտ}}$ - «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ն» խտանյութի ծավալն է, մլ;

$V_{\text{ջրի}}$ - խտանյութին ավելացվող ջրի ծավալն է, մլ;

$m_{\text{աշխ.լուծ.}}$ - պահանջվող $w_{\text{աշխ.լուծ.}}$ խտությամբ աշխատանքային լուծույթի քաշն է, գ;

$w_{\text{աշխ.լուծ.}}$ - ըստ «ակտիվ քլորի» աշխատանքային լուծույթի պահանջվող խտությունն է, %;

$w_{\text{խտ.}}$ - «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ն» խտանյութում «ակտիվ քլորի» զանգվածային բաժինն է %;

$P_{\text{խտ}}$ - «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ն» միջոցի խտությունն է, գ/մլ;

$p_{\text{ջրի}}$ – ջրի խտությունն է, հավասար 1,000,գ/մլ;

4) պատրաստվում է աշխատանքային լուծույթ՝ խմելու ջրին ավելացնելով «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» խտանյութ:

«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» աշխատանքային լուծույթի պահանջվող խտության աշխատանքային լուծույթի պատրաստման օրինակ

20. «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» 5,3 % «ակտիվ քլորի» պարունակությամբ և 1,108 գ/մլ խտությամբ միջոցից՝ 0,25,% «ակտիվ քլորի» պարունակությամբ 1000 գ. աշխատանքային լուծույթը պատրաստվում է հետևյալ կերպ.

1) բանաձև (1) - ին համապատասխան հաշվարկվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» միջոցի ծավալը՝ 1000 գ աշխատանքային լուծույթ պատրաստելու համար.

$$V_{\text{խտ}} = \frac{1000 \text{ գ} \cdot 0,25 \%}{5,3 \% \cdot 1,108 \text{ գ/մլ}} = 42,57 \text{ մլ}$$

2) այնուհետև բանաձև (2) - ին համապատասխան հաշվարկվում է ջրի պահանջվող ծավալը.

$$V_{\text{ջրի}} = \frac{(1000 \text{ գ} - 42,57 \text{ մլ} \cdot 1,108 \text{ գ/մլ})}{1,000 \text{ գ/մլ}} = 952,83 \text{ մլ}$$

21. Այսպիսով, ըստ «ակտիվ քլորի» 6,25 % «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» միջոցի 42,57 մլ խարնելով 952,28 մլ ծավալով ջրի հետ, ստացվում է ըստ «ակտիվ քլորի» 0,25 %-ոց 1000 գ (կամ 995,4 մլ) աշխատանքային լուծույթ:

22. Աշխատանքային լուծույթը պահվում է կափարիչ ունեցող տարաներում, որի վրա նշված է միջոցի անվանումը, խտությունը, նշանակությունը, պատրաստման ամսաթիվը և պիտանելիության ժամկետը:

23. «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» միջոցի աշխատանքային լուծույթները նախատեսված են ախտահանման (այդ թվում դեզոդորացման) համար.
- 1) բժշկական կազմակերպություններում կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման ժամանակ սենքերի նատրիումի հիպոքլորիդի ազդեցության նկատմամբ կայուն մակերեսների (հատակ, պատեր, առաստաղ), կահավորանքի, այդ թվում կոշտ և փափուկ կահույքի, սարքերի, սարքավորումների մակերեսների;
 - 2) հիվանդի խնամքի պարագաների, ինչպես նաև բժշկական կազմակերպության ընթացիկ աշխատանքների ժամանակ օգտագործվող այլ օժանդակ պարագաների (անձնական հիգիենայի միջոցներ, ռետինից և պոլիպրոպիլենից պատրաստված գորգերի, մոմլաթե պարագաների);
 - 3) սանիտարա-տեխնիկական սարքավորումների, այդ թվում հաղճապակուց, չուգունից, ակրիլից պատրաստված բուժական, ցեխային, հանքային, ջրամերսման, ջրաբուժական, գալվանական և այլ վաննաների, ինչպես նաև ակրիլային լոգախցիկների, ՍՊԱ-պարկուճների և այլն;
 - 4) մաքրման պարագաների և նյութերի;
 - 5) սպիտակեղենի (այդ թվում անհատական, անկողնային), աշխատանքային արտահագուստի, գործվածքից (բամբակյա, վուշե, սիթետիկ և խարնուրդներից) պատրաստված մաքրման պարագաների, այդ թվում արյունով և այլ կենսաբանական հեղուկներով աղտոտված՝ ձեռքային և մեքենայացված (տարբեր տիպի մասնագիտացված և կենցաղային լվացքի մեքենաներում, այդ թվում դոզավորող սարքերով ապահովված) եղանակներով;
 - 6) խաղալիքների, կոշիկների, սպորտային գույքի (ռետինից, պլաստիկից և այլ պոլիմերային նյութերից պատրաստված);
 - 7) ճաշարանային սպասքի, այդ թվում միանվագ օգտագործման;
 - 8) լաբորատոր և դեղատնային սպասքի;
 - 9) տարբեր նյութերից (մետաղից, ռետինից, ապակուց, պլաստմասից) պատրաստված բժշկական պարագաների, ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական (այդ թվում պտտվող, թքարտածծիչ համակարգերի և այլն), բացառությամբ էնդոսկոպների և դրանց գործիքների;

10) դիալիզի սարքավորումների նատրիումի հիպոքլորիդի ազդեցության նկատմամբ կայուն կոնտուրների և ջրի համակարգերի, դիալիզային հեղուկի ֆիլտրերի;

11) ազգաբնակչության սպասարքման ոլորտի կազմակերպություններում (գեղեցկության սրահներ, վարսավիրանոցներ և այլն) նատրիումի հիպոքլորիդի ազդեցության նկատմամբ կայուն գործիքների, օժանդակ պարագաների, կահավորանքի և սարքավորումների;

12) խմելու ջրի տեղափոխման և պահման տարաների;

13) հավկիթի կեղևի;

14) Б և В դասի բժշկական թափոնների (բժշկական կազմակերպություններում միանվագ օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակների, վիրակապական նյութի, անհատական և անկողնային սպիտակեղենի)՝ նախքան օգտահանելը, ինչպես նաև բժշկական կազմակերպությունների թափոնների հավաքման տարաների;

15) կենսաբանական նյութի, այդ թվում առանձին հավաքված (ներառյալ արյան, արյան շիճուկի, արյան պլազմայի, մեզի, կղանքի, փսխման զանգվածի, ողնուղեղային հեղուկի, վիրահատական և դրենաժային նյութի, ախտաբանաանատոմիական թափոնների (հյուսվածքներ, օրգաններ և այլն), էրիտրոցիտար զանգվածի, հարպտոլային հեղուկի, էնդոսկոպիկ լվացման ջրեր և այլն) և դրա հավաքման տարաների;

16) արյան մակարդուկների, դոնորական արյան և ժամկետանց արյան բաղադրամասերի;

17) չարորակ նորագոյացությունների բջիջներ պարունակող նյութերի;

18) ավտոմոբիլային տրանսպորտի (ներառյալ սանիտարական ծառայության և քաղաքաշտպանության, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, ուղևորափոխադրական, բեռնատար և այլն), ջրային տրանսպորտի, երկաթուղու և մետրոպոլիտենի սարքավորումների և մակերեսների;

19) բնակելի, վարչական և հասարակական շենքերում աղբահեռացման համակարգերի, ներառյալ աղբահավաք սարքավորումների, աղբատարների, աղբահավաք կոնտեյներների, աղբատար խողովակների և այլն;

20) ցիտոստատի և գենոտոքսիկ պրեպարատների (Դ դասի բժշկական թափոններ), դրանց հետ աշխատանքային մակերեսների վարակազերծման;

21) ախտահանող գորգերը և մատերը թրջելու համար;

22) ազգաբնակչության կողմից կենցաղում օգտագործելու համար՝ կենցաղի համար պիտակին համապատասխան:

24. Մանրէային և վիրուսային պատվաստանյութերի վարակազերծման համար, այդ թվում կենդանի (ԲՅԺ) պատվաստանյութերի և անատոքսինների:

25. Վթարային իրավիճակներում դեմերկուրիզացիայի համար (սնդիկ պարունակող սարքավորումների հետ աշխատանքի ժամանակ):

26. «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» խտանյութն առանց նոսրացման օգտագործվում է միայն կենսաբանական նյութերի մեծ քանակություններով կամ սիբիրյան խոցի հարուցիչներով բաղարկման դեպքում՝ սույն հրահանգում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

«Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» խտանյութի և աշխատանքային լուծույթների օգտագործման եղանակները և պահպանման ժամկետները

Աղյուսակ 2

Պահպանման պայմանները, կիրառման եղանակները	Պիտանելիության ժամկետը
Արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) պահվող միջոց	2 տարի
Արևի ուղղ ճառագայթներից հեռու, փակ ապակյա, պլաստմասե կամ էմալապատ (առանց էմալի ամբողջականության խախտման) տարաներում պահվող աշխատանքային լուծույթներ	14 օր
Թափանցիկ կամ ոչ հերմետիկ տարողություններում պահվող աշխատանքային լուծույթներ	24 ժամ
Սրբելու կամ ոռոգման եղանակներով ախտահանման համար կիրառվող լուծույթներ	Միանվագ

Ցանկացած եղանակով (սրբելու, ոռոգելու, ընկղմելու, թրջելու) ախտահանման համար օգտագործվող լուծույթներ, սինթետիկ լվացող միջոցների ավելացումով	Միանվագ
Տեսանելի աղտոտվածությամբ (այդ թվում կենսաբանական հեղուկներով) առարկաների ընկղմելու (թրջելու) եղանակով ախտահանման համար օգտագործվող լուծույթներ	Միանվագ
Տեսանելի մաքուր առարկաների ընկղմելու (թրջելու) եղանակով ախտահանման համար օգտագործվող լուծույթներ	Բազմակի, բայց ոչ ավել, քան 24 ժամվա ընթացքում

6. ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Սենքերի մակերեսների (հատակ, պատեր, առաստաղ, կահավորանք, սարքավորումներ) ախտահանումն իրականացվում է սրբելու կամ ոռոգման եղանակով, միջոցի ծախսը կազմում է սրբելու դեպքում 100 մլ/մ², ոռոգման դեպքում՝ 300 մլ/մ² կամ 150 մլ/մ²՝ ակխված հեղացրող սարքի տեսակից:

28. Ախտահանիչի ռացիոնալ կիրառման և մշակման թունավորության նվազեցման նպատակով նախքան մակերեսների ախտահանումը.

1) բոլոր մակերեսները դասակարգվում են ըստ չափերի (մեծ, միջին, փոքր, այդ թվում ձեռքերի հետ հաճախակի շփում ունեցող), պատրաստման նյութի (պինդ, հարթ, ոչ ծակոտկեն, ծակոտկեն), աղտոտվածության աստիճանի (առանց տեսանելի աղտոտվածության, տեսանելի աղտոտվածությամբ և կենսաբանական հեղուկների մեծ թափվածքների);

2) ընտրվում է մշակման եղանակը՝ հաշվի առնելով մշակվող մակերեսի մեծությունը, նյութը և աղտոտվածության աստիճանը:

29. «Նուրբ» (պոլիմերային նյութերից, փայտից, քլորի ազդեցության նկատմամբ զգայուն մետաղներից, ապակուց պատրաստված նյութերից, ինչպես նաև կոռոզիայի հետքերով) մակերեսների մշակման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում ազդեցության ժամանակի խիստ պահպանմանը, ինչպես նաև ազդեցության ժամանակի ավարտին մշակված մակերեսից միջոցի մնացորդների հեռացմանը:

30. Տարբեր վարակների ժամանակ ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 3-ում, հիմնական մաքրման աշխատանքների ժամանակ առաջնորդվում են աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներով:

31. Ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակների հարուցիչների հայտնաբերման դեպքում իրականացվում է ընթացիկ ախտահանում սույն հրահանգի աղյուսակ 13-ին և 4.8 կետին համապատասխան:

32. Հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման դեպքում ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 14-ում:

33. Մակերեսների չափերից ելնելով մշակման մեծ մակերեսները (հատակը, առաստաղը և այլն) ընթացիկ ախտահանման ժամանակ մշակվում են սրբելու եղանակով, օգտագործելով միջոցի նվազագույն խտության լուծույթներ: Դժվարահասանելի հատվածները ոռոգվում են միջոցի լուծույթով:

34. Մեծ չափերով մակերեսները սենքերում ունեն նաև գոլորշիացման մեծ մակերես, այդ իսկ պատճառով բարձր խտությամբ լուծույթների օգտագործումը հիմնավորված է միայն անհրաժեշտության դեպքում (օրինակ, արյուն կամ կենսաբանական հեղուկներ թափվելու դեպքում, սիրիդյան խոցի հայտնաբերման դեպքում) և հիմնական մաքրման աշխատանքների իրականացման ժամանակ:

35. Կահավորանքի, սարքավորումների, սարքերի միջին չափերի մակերեսներն ընթացիկ ախտահանման ժամանակ սրբում են միջոցի նվազագույն խտությամբ լուծույթներով: Դժվարահասանելի հատվածները ցողվում են միջոցի լուծույթով: Որոշ քիմիական նյութերի նկատմամբ անկայուն նյութերից պատրաստված սարքավորումների մակերեսները չեն մշակվում քլորպարունակող միջոցներով:

36. Միջին չափերի մակերեսների մշակման ժամանակ միջոցի բարձր խտությամբ լուծույթների (0,5 %; 1,0 % ըստ ակտիվ քլորի) կիրառումն արդարացված է միայն անհրաժեշտության դեպքում (օրինակ, արյուն կամ կենսաբանական հեղուկներ թափվելու դեպքում, սիրիդյան խոցի հայտնաբերման դեպքում), ինչպես նաև հիմնական մաքրման աշխատանքների իրականացման ժամանակ:

37. Ձեռքերի հետ հաճախակի հպվող փոքր չափերի մակերեսները (դռան բռնակներ, աստիճանավանդակների բազրիկներ, ծորակի բռնակներ,

հիվանդասենյակների և սանհանգույցների շրջակա մակերեսները և այլն) մշակվում են միջոցի բարձր խտությամբ լուծույթներով նվազագույն ազդեցության ժամանակով սրբելու կամ ոռոգելու եղանակով:

38. Մանրակրկիտ մշակում են սանգանգույցներին կից հատվածների մակերեսները (դռան բռնակներ, հոսանքի անջատիչներ և աղտատված ձեռքերին հաճախակի հպվող մակերեսներ): Նշված մակերեսները կարող են աղտոտված լինել մանրէների սպորներով: Նման մակերեսները մշակվում են «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» լուծույթներով 0,5 % և 1,0 % ակտիվ քլորի պարունակությամբ:

39. Պինդ հարթ ոչ ծակոտկեն նյութերից մակերեսները, որոնք չունեն կոռոզիայի հետքեր, հարթ ապակուց և հաղճապակուց, անթափանց հղկված շինանյութից (օրինակ, մարմար կամ գրանիտ), բարձր խտության պլաստմասից (պոլիկարբոնատի կամ մեթաքրիլի հիմքով), որոնք չեն կլանում օրգանական լուծիչներ, լինուլեումից մակերեսները առավել հեշտությամբ և արդյունավետությամբ են վարակազերծվում: Այդ իսկ պատճառով դրանց ընթացիկ ախտահանման համար կիրառվում են ախտահանիչ միջոցի նվազագույն խտությամբ լուծույթներ նվազագույն ազդեցությամբ ժամանակով:

40. Ծակոտկեն նյութերից պատրաստված մակերեսները (ցանկացած նյութից ներկված մակերեսներ, կոռոզիայի ենթակվող մետաղներից, ծակոտկեն ապակուց և հաղճապակուց, ապակեթելքից, ծակոտկեն շինանյութից (ավազաքարի, կրաքարի տիպի և այլն), ցածր խտության պլաստմասից (պենոպոլիստիրոլից, ցածր խտության պոլիէթիլենից), փայտից (լաքով կամ ներկով պատված կամ առանց դրա), բետոնից, աղյուսից, ցեմենտից, ծեփամածիկից, գիպսից և գիպսաստվարաթղթից; ռետինից; ֆիբրոլիտից; խեժաթղթից; մանրատախտակից (ԴՍՊ); ասֆալտից) հնարավորություն չեն ընձեռում տեսանելի աղտոտվածությունից նախնական որակյան մաքրման, այդ իսկ պատճառով դրանց վարակազերծումը դժվարացած է: Նման մակերեսների մշակման համար օգտագործվում են ախտահանիչ միջոցի լուծույթներ համեմատաբար բարձր խտությամբ և երկար ազդեցության ժամանակով:

41. Ծակոտկեն և ոչ ծակոտկեն նյութերով պատված մակերեսները մշակվում են սրբելու եղանակով, դժվար հասանելի հատվածները մշակվում են ոռոգման եղանակով:

42. Միջոցի բարձր խտությամբ (ըստ ակտիվ քլորի 0,5 %, 1,0 %) լուծույթների օգտագործումը ցանկացած տիպի նյութերով պատված մակերեսների մշակման համար արդարացված է միայն անհրաժեշտության դեպքում (օրինակ, կենսաբանական հեղուկներ թափվելու դեպքում կամ սիսթիմայի խոցի ժամանակ վարակազերծման աշխատանքներ իրականացնելիս), ինչպես նաև հիմնական մաքրման աշխատանքների իրականացման ժամանակ: Նման դեպքերում ևս մշակման եղանակն ընտրվում է հաշվի առնելով մակերեսների չափը և դրա աղտոտվածության աստիճանը:

43. Տեսանելի աղտոտվածություն չունեցող մակերեսներն ախտահանվում են սրբելու եղանակով, դժվարահասանելի հատվածներն ախտահանվում են ոռոգելու եղանակով:

44. Ցանկացած նյութերով պատված մակերեսները, որոնց վրա առկա է աչքով տեսանելի ոչ օրգանական (փոշի, կեղտ և այլն) և օրգանական (կենսաբանական հեղուկների (արյան, թքի, խորխի, մեզի, փսխման զանգվածի և այլն) կաթիլներ, ցայտումներ) աղտոտվածություն վարակազերծվում են միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1%, 0,25%, 0,5%, 1,0% լուծույթներով՝ աղյուսակ 3-ում ծակոտկեն մակերեսների համար ներկայացված ռեժիմներով:

45. Ցանկացած կտրող-ծակող առարկաները (կտրված ապակի, ասեղներ և այլն), որոնք կարող են լինել մշակման ենթակա մակերեսներին, հավաքվում են օժանդակ առարկաների (գոգաթիակ, ավել, ակցան և այլն) օգնությամբ՝ դրանցով վնասվելու հավանականությունը բացառելու նպատակով: Առանձին դեպքերում աղտոտվածությունը մաքրելու համար կարող է պահանջվել խոզանակ (օրինակ, անհարթություններով ծակոտկեն մակերեսներին (բետոն և այլն) կենսաբանական հեղուկներ թափվելիս) կամ լրացուցիչ վացող միջոցներ (գորգեր, փափուկ կահույք և այլն մաքրելիս): Արյան և կենսաբանական հեղուկների գորգերի կամ փափուկ կահույքի վրա թափվելիս ձեռքային եղանակով մաքրումն ուղեկցվում է գոլորշիով կամ քիմիական մաքրումով:

46. Մշակման ավարտին պահանջվում է միջոցի մնացորդների հեռացումը մշակվող օբյեկտներից, քանի որ դրանք կարող են առաջացնել մետաղական

մակերեսների վնասում, ապակյա մակերեսների պղտորում ինչպես նաև նուրբ պոլիմերային մակերեսների մաշվածություն:

47. Փոքր չափերով մակերեսներից օրգանական աղտոտվածությունը հեռացվում է կրկնակի ախտահանելով հետևյալ սխեմայով.

1) աղտոտված մակերեսը ծածկվում է միջոցի լուծույթով՝ բացառելով ցայտումների առաջացումը, ուղղահայաց մակերեսները (առաստաղներ, պատեր, աստիճաններ) միջոցով պատվում են հեղացրիչի կամ հատակը լվանալու փայտի օգնությամբ;

2) ցայտումներից և աերոզոլների առաջացումից խուսափելու նպատակով հեղացրիչը պահվում է մշակվող մակերեսին հնարավորինս մոտ;

3) միջոցը լցվում է արտաքին եզրերից դեպի կենտրոն ուղղությամբ;

4) մակերեսը միջոցով պատելուց հետո սպասում են մինչև այն ներծծվի՝ աղյուսակ 3-ու ներկայացված ազդեցության ժամանակի ռեժիմով;

5) ախտահանված կենսաբանական աղտոտվածությունը մաքրվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» աշխատանքային լուծույթով թրջված գործվածքից անձեռոցիկով: Դրանք կարելի է մաքրել նաև միանվագ օգտագործման թղթե կամ այլ նյութից պատրաստված անձեռոցիկով, որից հետո դրանք ոչնչացվում են;

6) այնուհետև մակերեսը կրկին մշակվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» աշխատանքային լուծույթով, պահպանելով աղյուսակ 3-ում ներկայացված ազդեցության ժամանակը;

7) ախտահանման ազդեցության ժամանակի ավարտին մակերեսներից ախտահանիչ միջոցի մնացորդների հեռացման նպատակով իրականացվում է խոնավ մաքրում:

48. Մեծ քանակությամբ կենսաբանական հեղուկներով (արյան, մեզի (առանձին տարայի մեջ հավաքված), փսխման զանգվածի և այլ կենսաբանական հեղուկներով թափվածքներ) մակերեսների աղտոտման դեպքում թափված հեղուկը հավաքվում է սորբենտի միջոցով, որից հետո մակերեսը մշակվում է, քանի որ մեծ քանակությամբ կենսաբանական հեղուկները կարող են ինակտիվացնել ախտահանիչ միջոցը, դարձնելով այն անարդյունավետ:

49. Անկախ նրանից, թե ինչ նյութով է պատված մակերեսը, արյան և կենսաբանական հեղուկների մեծ քանակություններով աղտոտվածության դեպքում ախտահանումն իրականացվում է միջոցի բարձր խտության լուծույթներով (ըստ ակտիվ քլորի 0,5%, 1,0%) աղյուսակ 3-ում ծակոտկեն մակերեսների համար ներկայացված ռեժիմներով:

50. Ախտահանիչ միջոցի լուծույթները կարող են քիմիական ռեակցիայի մեջ մտնել մեզ պարունակող հեղուկների հետ, առաջացնելով գազային քլորի թունավոր գոլորշիներ: Նման թափվածքների վարակիազերծման ժամանակ տարածքն օդափոխվում է:

51. Կենսաբանական հեղուկներով աղտոտված մակերեսների առավել արդյունավետ եղանակը երկու փուլով ախտահանումն է:

52. Առաջին փուլում իրականացվում է թափվածքի հավաքում սորբենտով, տեղային խոնավ մաքրում և վարակազերծում «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» լուծույթով:

53. Երկրորդ փուլում մակերեսը ախտահանվում են «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» լուծույթով:

54. Մշակումն իրականացվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

1) առաջին հերթին, սահմանափակվում է թափվածքի մակերեսը և հավաքվում (սորբցվում) հեղուկը: Կենսաբանական հեղուկների հավաքման համար օգտագործվում են չեզոք սորբենտներ, օրինակ, միանվագ օգտագործման թղթե կամ գործվածքից անձեռոցիկներ: Այդ ընթացքում օգտագործվում է ամբողջ թափվածքը հավաքելու համար պահանջվող քանակի սորբենտ;

2) ինֆեկցված (այդ թվում պոտենցիալ ինֆեկցված) կենսաբանական հեղուկների սորբենտով հանաքման ժամանակ անպայման օգտագործվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-» լուծույթ: Չի թույլատրվում նման թափվածքների հավաքումն առանց ախտահանիչի օգտագործման;

3) միջոցի աշխատանքային լուծույթը ցողվում է աղտոտվածության արտաքին եզրերից դեպի կենտրոնական հատված ուղղությամբ՝ սորբենտով այն հավաքելուց անմիջապես հետո, խուսափելով ցայտումների առաջացումից;

- 4) հեղացրիչն այդ ընթացքում պահվում է մշակվող մակերեսին հնարավորինս մոտ՝ նվազագույնի հասցնելով ցայտումների և աէրոզոլների առաջացումը;
- 5) պահպանվում է աղյուսակ 3-ում նշված ազդեցության ժամանակը;
- 6) ամբողջ հեղուկը ներծծվելուց հետո սորբենտը հեռացնվում է;
- 7) անմիջապես սորբենտի հեռացումից հետո իրականացվում է մակերեսի վերջնական ախտահանում միջոցի լուծույթով՝ նախորդ փուլում օգտագործված խտությամբ լուծույթով և աղյուսակ 3-ում նշված ազդեցության ժամանակին համապատասխան: Եվս մեկ անգամ մշակվում է մակերեսը ցողելու կամ սրբելու եղանակով և պահպանվում ազդեցության ժամանակը;
- 8) ախտահանման ազդեցության ժամանակի ավարտին ախտահանիչ միջոցի մնացորդները մակերեսից հեռացնելու նպատակով իրականացվում է խոնավ մաքրում:

55. Թափվածքի չեզոքացման համար օգտագործվում է ստանդարտ հավաքածու, որի մեջ նարառված է.

- 1) «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի աշխատանքային լուծույթ»;
- 2) քիմիական և կենսաբանական նյութերի նկատմամբ կայուն ձեռնոցներ;
- 3) սուր կտրող-ծակող առարկաների խոտանման համար նախատեսված հերմետիկ փակվող տարաներ (կոնտեյներներ):

56. Հավաքված կենսաբանական նյութերի խոտանումն իրականացվում է գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Առանձին հավաքված կենսաբանական հեղուկները վարակազերծվում են կափարիչով փակվող տարաներում՝ աղյուսակ 12-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 3

Տարբեր վարակների ժամանակ սենքերի մակերեսների, սարքերի և սարքավորումների ախտահանման ռեժիմները

	Մշակվող մակերեսների տեսակը, պատրաստման նյութը, աղտոտվածության աստիճանը և մակերեսը
--	---

Վարակի էթիոլոգիան	Առանց տեսանելի աղտոտվածության հարթ ոչ ծակոտկեն կոշտ նյութեր				1) Մեծ մակերեսներ 2) մակերեսներ, որոնց որակյան մաքրումը դժվարեցված է 3) Տեսանելի աղտոտվածություն (կաթիլներ կամ ցայտումներ, այդ թվում չորացած) ունեցող ցանկացած մակերեսներ				Կենսաբանական հեղուկների թափվածքներով մակերեսներ			
	Մեծ և միջին		Փոքր, արդ թվում ձեռքերի հետ հաճախակի շփվող		Մեծ և միջին		Փոքր, արդ թվում ձեռքերի հետ հաճախակի շփվող		Մեծ և միջին		Փոքր, արդ թվում ձեռքերի հետ հաճախակի շփվող	
	Մշակման եղանակները											
	Սրբում, ոռոգում				Սրբում, ոռոգում				Ոռոգում երկու անգամ առանց ժամային ինտերվալի, որից հետո սրբելով			
	Աշխատանքային լուծույթի խտությունը, % ըստ ակտիվ քլորի - ազդեցության ժամանակը, րոպե											
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,05 0,1	30 15	0,25 0,5 1,0	10 5 3	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5
Վիրուսային	0,05 0,1	30 15	0,25 0,5 1,0	10 5 3	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5
Սնկային (կանդիդոզներ)	0,05 0,1	30 15	0,25 0,5 1,0	10 5 3	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5	0,1	30	0,25 0,5 1,0	20 10 5
Սնկային (դերմատոֆիթիա)	0,25 0,5	20 10	0,5 1,0	10 5	0,25	30	0,5 1,0	15 10	0,25	30	0,5 1,0	15 10

Մնկային (բորբոսասնկ եր)	0,25 0,5	30 20	0,5 1,0	20 10	0,1	60	0,25 1,0	30 10	-	-	-	-
Տուբերկուլոզ	0,25	10	0,5 1,0	10 5	0,25	20	0,5 1,0	15 10	0,25	20	0,5 1,0	15 10

Աղյուսակ 4

Տարբեր պրոֆիլի բժշկական և այլ կազմակերպություններում հիմնական մքարման
ժամանակ օբյեկտների ախտահանման ռեժիմները

Կազմակերպության պրոֆիլը	Միջոցի խտությունն ըստ ակտիվ քլորի	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման եղանակը
Սոմատիկ բաժանմունքներ (բացի միջամտությունների սենյակից)	0,05 0,1 0,25	30 15 10	Սրբում, ռոռզում
Վիրաբուժական, միջամտությունների կաբինետներ, ատամնաբուժական, մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքներ և կաբինետներ, լաբորատորիաներ, վիրահատարաններ, վիրակապարաններ	0,1 0,25 0,5	30 20 10	Սրբում, ռոռզում
Հակատուբերկուլոզային բժշկական կազմակերպություններ	0,25 0,5	30 15	Սրբում, ռոռզում
Մաշկա-վեներաբանական բժշկական կազմակերպություններ	0,25 0,5	30 15	Սրբում, ռոռզում
Մաքրում բորբոսասնկերի ժամանակ	0,5 1,0	30 15	Սրբում, ռոռզում
Ինֆեկցիոն բժշկական կազմակերպություններ	-	-	Սրբում, ռոռզում
Մանկական կազմակերպություններ, սոցապահովման կազմակերպություններ, կոմունալ օբյեկտներ	0,05 0,1 0,25	30 15 10	Սրբում, ռոռզում

57. Բժշկական կազմակերպություններում օգտագործվող օժանդակ պարագաները (հիվանդի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ և այլն) մշակվում են, հաշվի առնելով դրանց չափերը (փոքր, խոշոր), պատրաստման նյութերը (հարթ ոչ ծակոտկեն (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ), ծակոտկեն (ռետին և այլ պոլիմերային նյութեր, գործվածք)), աղտոտվածության աստիճանը (առանց տեսանելի աղտոտվածության և տեսանելի աղտոտվածությամբ):

58. Առարկաների և օբյեկտների ախտահանումն իրականացվում է ընկղմելու և սրբելու եղանակով: Ընկղմելու եղանակով ախտահանման ժամանակ լուծույթի շերտի հաստությունը առարկաների վրա կազմում է 1 սմ-ից ոչ պակաս:

59. Մակերեսների մշակման ժամանակ միջոցի ծախսի նորման կազմում է.

- 1) սրբելու դեպքում – 100 մլ/մ² մակերեսին
- 2) ոռոգելու դեպքում – 300 մլ/մ² կամ 150 մլ/մ² մակերեսին՝ կախված հեղացրող սարքի տեսակից:

60. Բժշկական կազմակերպություններում օժանդակ առարկաների և օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 5-ում:

61. Հիվանդի խնամքի պարագաները (մահճակալների հարմարանքներ, աթոռակներ, լոգարանների աստիճաններ և տախտակներ, ռետինե գորգեր, զուգարանակոնքի հարմարանքներ, սանհանգույցների հենակներ, սառցե էլեմենտներ, ջեռակներ, ռետինե տակդիրներ, շարժական զուգարան-աթոռներ, գիշերանոթներ, տակդիրներ, միզընդունիչներ, զուգարանակոնքի մաքրման խոզանակներ, ներքնակների պոլիմերային պաշտպանիչ ծածկեր, կեղտոտ սպիտակեղենի հավաքման համար նախատեսված մոմլաթե պարկեր, պացիենտների տեղափոխման հարմարանքներ, հաշմանդամների սայլակներ, հենակներ, բռնիչներ, քայլակներ, բազրիքներ, մերսման հարմարանքներ, թեքահարթակներ, ռետինե և կիրզե ճիտկակոշիկներ, պոլիմերային նյութերից, կաշվից կամ դրա փոխարինիչներից կոշիկներ, մանկական խաղալիքներ (փայտյա, պլաստմասե, ռետինե, մետաղական), ռետինե ձեռնոցներ, այդ թվում՝ հագած ձեռքերին և այլն) մշակվում են ընկղմելու եղանակով՝ փոքր չափեր ունեցող պարագաներն ընկղմվում

են լուծույթի մեջ ամբողջությամբ իսկ մեծ չափեր ունեցող պարագաները, ինչպես նաև կոշիկների ներքին և արտաքին մակերեսները, որոնք հնարավոր չէ մշակել ընկղմելով, սրբվում են լուծույթով թրջաց լաթով կամ ցողվում՝ աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

62. Ախտահանման ազդեցության ժամանակի ավարտին պարագաները լվացվում են ջրով ոչ պակաս քան 3 րոպե տևողությամբ՝ մինչև քլորի հոտի անհետանալը:

63. Բուժաշխատողները փոխում են ձեռնոցները յուրաքանչյուր հիվանդից հետո, սակայն երեբեմն անհրաժեշտություն է առաջանում հանելու ժամանակ ձեռքերի բաղարկումից խուսափելու նպատակով հեռացնել տեսանելի աղտոտվածությունը ձեռնոցներից, ինչը հնարավոր է իրականացնել միջոցի լուծույթով թրջաց վիրախծոծով կամ անձեռոցիկով՝ գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

64. Թույլատրվում է բուժանձնակազմի ձեռքերին հագած ձեռնոցների (քլորոպրենային ռետինից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերի նկատմամբ կայուն այլ նյութերից) վարակազերծումը միկրոկենսաբանական լաբորատորիաներում մանրէային, ներառյալ տուբերկուլոզի, վիրուսային և սնկային (կանդիդոզներ) վարակների ժամանակ, ինչպես նաև ինֆեկցված նյութով ձեռնոցների աղտոտվածության դեպքում:

65. Մշակման համար տարայի մեջ լցվում է պահանջվող խտությամբ ախտահանիչ լուծույթ, ձեռնոցները հագած ձեռքերը ընկղմվում և պահվում աղյուսակ 5-ում ներկայացված ազդեցության ժամանակին համապատասխան:

66. Մաքրման պարագաները (հատակի մաքրման համար օգտագործվող խոզանակները, փայտերը և այլ պարագաները, գոգաթիակները, պատուհանների մաքրման հարմարանքները, դույլերը, զամբյուղները և մեծ տարաները, մաքրող մեքենաների տարբեր մասնիկներ, սպասք լվանալու պարագաները, սեղան մաքրելու լաթերը և մաքրման այլ հարմարանքները) մշակվում են ընկղմելու եղանակով՝ փոքր չափեր ունեցող պարագաներն ընկղմվում են լուծույթի մեջ ամբողջությամբ ապահովելով առնվազն 1 սմ աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը դրանց վրա իսկ մեծ չափեր ունեցող պարագաները, որոնց չափերը հնարավորություն չեն

ընձեռում դրանք ընկղմելու համար, սրբվում են լուծույթով թրջած լաթով կամ ցողվում՝ աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

67. Գործվածքից առարկաները մշակվում են ընկղմելու եղանակով՝ 5 և լուծույթի մեջ 1 կգ հաշվառկից ելնելով:

68. Ազդեցության ժամանակի ավարտից հետո ախտահանված առարկաները լվացվում են ջրով ոչ պակաս քան 3 րոպե տևողությամբ՝ մինչև քլորի հոտի անհետանալը:

Աղյուսակ 5

Տարբեր վարակների ժամանակ բժշկական կազմակերպություններում օժանդակ առարկաների և օբյեկտների ախտահանում

Վարակի էթիոլոգիան	Բժշկական կազմակերպությունում օգտագործվող օժանդակ պարագաները, մաքրման գույքը					
	Առանց տեսանելի աղտոտվածության հարթ ոչ ծակոտկեն նյութերից պատրաստված առարկաներ		1) Տեսանելի աղտոտվածությամբ հարթ ոչ ծակոտկեն նյութերից պատրաստված 2) Ծակոտկեն նյութերից առարկաներ, որոնց որակյան մաքրումը դժվարեցված է		Առանց տեսանելի աղտոտվածության ձեռնոցներով ձեռքեր (լատեքս, ռետին, պոլիվիլքլորիդ)	
	Մշակման եղանակները					
	Ընկղմում, սրբում, ոռոգում				Ընկղմում	
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ ակտիվ քլորի % - ազդեցության ժամանակ, րոպե					
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,05	20			0,05	1
	0,1	10	0,1	15		
	0,25	5	0,25	10		
	0,5	3	0,5	5		
Վիրուսային	0,025	45			0,05	1
	0,05	20	0,1	15		
	0,1	10	0,25	10		
	0,25	5	0,5	5		
	0,05	20	0,1	15		

Սնկային (կանիդոզներ)	0,1	10	0,25	10	0,05	1
	0,25	5	0,5	5		
	0,5	3				
Սնկային (դերմատոֆիթիա)	0,25	10	0,25	15	-	-
	0,5	5	0,5	10		
Սնկային (բորբոսասնկեր)	0,25	20	0,25	30	-	-
	0,5	10	0,5	20		
Տուբերկուլոզ	0,25	15	0,25	20	0,05	1
	0,5	10	0,5	15		
	0,1	5	0,1	10		

69. Սանիտարա-տեխնիկական, ջրաբուժական և հիդրոմերսման սարքավորումները (վաննաներ, լավացարանակոնքեր, զուգարանակոնքեր, տարբեր տիպի լոգախցիկներ, բուժիչ, ցեխային, հանքային, հիդրոմերսման վաննաներ, ՍՊԱ-պարկուճներ, հիդրոմերսման սարքավորումների կոնտուրներ և այլն) մշակվում են սրբելու կամ ոռոգելու եղանակով՝ 1 զուգարանակոնքին 200 մլ լուծույթի հաշվարկով: Ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 6-ում:

70. Հուգարանակոնքերը ախտահանելու համար.

- 1) նվազագույնի է հասցվում մակերեսին առկա կենսաբանական աղտոտվածությունը, հատուկ ուշադրություն դարձնելով մեզի հետքերի առկայությանը՝ այն չեզոքացնում է ախտահանիչը, արտազատելով գազային քլորի թունավոր գոլորշիներ,
- 2) զուգարանակոնքի պարունակությունը լվացվում է ջրով,
- 3) սարքը պատվում է միջոցի պահանջվող խտությամբ աշխատանքային լուծույթի անհրաժեշտ քանակությունով (200 մլ),
- 4) իրականացվում է մանրակրկիտ մեխանիկական մաքրում օժանդակ հարմարանքներով, հատուկ ուշադրություն դարձնելով դժվարահասանելի հատվածների մաքրմանը,
- 5) պահպանվում է ազդեցության ժամանակը,
- 6) պարունակությունը լվցվում է ջրով:

71. Վաննաները, լվացարանակոնքերը, լոգախցիկները մշակելու համար.

- 1) սարքը պատվում է միջոցի պահանջվող խտությամբ աշխատանքային լուծույթի անհրաժեշտ քանակությամբ,
- 2) իրականացվում է մշակվող մակերեսի մեխանիկական մաքրում առնվազն 1 րոպե տևողությամբ օժանդակ պարագաների օգնությամբ, հատուկ ուշադրություն դարձնելով դժվարահասանելի հատվածների մաքրմանը,
- 3) պահպանվում է ազդեցության ժամանակը,
- 4) միջոցի մնացորդները հեռացվում են ջրով:

72. Ջրաբուժական և հիդրոմերսման սարքավորումների մաքրումը և ախտահանումն իրականացվում է սարքավորման արտադրողի հրահանգների համաձայն՝ տվյալ բժշկական կազմակերպության կողմից հաստատված ընթացակարգերին համապատասխան:

73. Վաննաների մաքրման համար.

- 1) վաննայի պատերը պատվում են անհրաժեշտ քանակությամբ միջոցի պահանջվող խտությամբ աշխատանքային լուծույթով (աղյուսակ 6) ոռոգելու կամ սրբելու եղանակով (օրինակ, լաթի կամ սպունգի օգնությամբ),
- 2) պահպանվում է ազդեցության ժամանակը,
- 3) միջոցի մնացորդները հեռացվում են ջրով:

74. Հիդրոմերսման սարքավորման կոնտուրի մշակման համար.

- 1) վաննան լցվում է 18-20°C ջերմաստիճանի ջրով,
- 2) ավելացվում է միջոցի համապատասխան քանակություն՝ ըստ ակտիվ քլորի 0,05% լուծույթ ստանալու համար (100 լ ջրին ավելացնել 800 մլ միջոց; 150 լ ջրին՝ 1200 մլ միջոց; 200 լ ջրին՝ 1600 մլ միջոց),
- 3) միացվում է պոմպը 10 րոպե տևողությամբ՝ միջոցի լուծույթը համակարգով անցկացնելու համար,
- 4) պոմպը անջատվում է, լուծույթը թափվում,
- 5) վաննան լցվում է մաքուր տաք կամ սառը ջրով,

6) պոմպը միացվում է, ջուրն անցկացնելով համակարգով ոչ պակաս քան 3 թուփե տևողությամբ,

7) պոմպն անջատվում է, ջուրը թափվում, վաննան լվացվում:

Աղյուսակ 6

Բժշկական և այլ կազմակերպություններում սանիտարա-տեխնիկական,
ջրաբուժական և ջրամերսման սարքավորումների ախտահաման ռեժիմները

Վարակի էթիոլոգիան	Առարկաների և օբյեկտների տեսակը, պատրաստման նյութը, աղտոտվածության աստիճանը							
	Սանիտարա-տեխնիկական սարքավորումներ				Ջրաբուժական և ջրամերսման սարքավորումների ներքին մակերեսներ			
	Առանց տեսանելի աղտոտվածության մակերեսներ		Տեսանելի աղտոտվածությամբ մակերեսներ		Առանց տեսանելի աղտոտվածության մակերեսներ		Տեսանելի աղտոտվածությամբ մակերեսներ	
	Մշակման եղանակները՝ սրբում, ոռոգում							
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ ակտիվ քլորի % - ազդեցության ժամանակ, թուփե							
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
	Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,1 0,25 0,5 1,0	20 10 5 3	0,1 0,25 0,5 1,0	30 20 10 5	0,25 0,5	5 3	0,25 0,5
Վիրուսային	0,1 0,25 0,5 1,0	20 10 5 3	0,1 0,25 0,5 1,0	30 20 10 5	0,25 0,5	5 3	0,25 0,5	10 5
Սնկային (կանիդոզներ)	0,1 0,25 0,5 1,0	20 10 5 3	0,1 0,25 0,5 1,0	30 20 10 5	0,25 0,5	5 3	0,25 0,5	10 5
Սնկային (դերմատոֆիթիա)	0,25 0,5	20 10	0,25 0,5	30 15	0,25 0,5	20 10	0,5	15
Սնկային (բորբոսասնկեր)	0,25 0,5	30 20	0,25 0,5	40 30	-	-	-	-

Ըստ ակտիվ քլորի 0,025 %		Ըստ ակտիվ քլորի 0,05 %		Ըստ ակտիվ քլորի 0,1 %		Ըստ ակտիվ քլորի 0,2 %		Ըստ ակտիվ քլորի 0,25 %		Ըստ ակտիվ քլորի 0,3 %		Ըստ ակտիվ քլորի 0,5 %	
⇓		⇓		⇓		⇓		⇓		⇓		⇓	
Մի ջոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ
100	24900	200	24800	400	24600	800	24200	1000	24000	1200	23800	2000	23000
10 կգ սպիտակեղեն													
⇓													
Ըստ ակտիվ քլորի 0,025 %		Ըստ ակտիվ քլորի 0,05 %		Ըստ ակտիվ քլորի 0,1 %		Ըստ ակտիվ քլորի 0,2 %		Ըստ ակտիվ քլորի 0,25 %		Ըստ ակտիվ քլորի 0,3 %		Ըստ ակտիվ քլորի 0,5 %	
⇓		⇓		⇓		⇓		⇓		⇓		⇓	
Մի ջոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ	Միջ ոց մլ	Ջուր մլ
200	49800	400	49600	800	49200	1600	48400	2000	4800 0	2400	47600	4000	46000

76. Ախտահանման գործընթացը հնարավոր է արագացնել աշխատանքային լուծույթների հետ կիրառելով սինթետիկ լվացող փոշիներ, որոնք ձեռքային և մեքենայացված գործընթացների ժամանակ սույն հրահանգում ներկայացված ռեժիմներով կիրառելու դեպքում չեն ազդում ակտիվ քլորի պարունակության վրա:

77. Աշխատանքային լուծույթների հետ լվացող միջոցներ կիրառելիս անհրաժեշտության դեպքում աշխատանքային լուծույթների կայունությունը (կոնկրետ տվյալ լվացող միջոցի համար) կարելի է ստուգել արտադրողի փորձարկման լաբորատորիայում:

78. Սպիտակեղենի ախտահանման/ճերմակեցման համար.

- 1) տեսանելի մաքուր և աղտոտված սպիտակեղենը մշակվում են առանձին,
- 2) սպիտակ և գունավոր սպիտակեղենը մշակվում են առանձին,

3) թաշկինակները, տուբերկուլզով հիվանդների կողմից օգտագործվող թքամանների ֆլանելե ներդիրները ախտահանվում են միայն կանսաբանական հեղուկներով աղտոտված սպիտակեղենի ռեժիմներով: Նման իրերի ախտահանումը ցանկալի է իրականացնել սպիտակեղենի ընդհանուր զանգվածից առանձին,

4) կենսաբանական հեղուկներով խիստ աղտոտված սպիտակեղենը նախապես մաքրվում է աղտոտվածությունից՝ վարակի փոխանցման գործոն հանդիսացող աէրոզոլներով վարակման ռիսկը նվազեցնելու համար,

5) աշխատանքային լուծույթի հետ սինթետիկ լվացող միջոց կիրառելիս ուսումնասիրվում է վերջինիս բաղադրությունը՝ ախտահանման/ճերմակեցման առավելագույն ազդեցությունն ապահովելու և ակտիվ քլորի պարունակության նվազեցումը (որպես ախտահանիչ միջոցի բիոցիդ հատկության թուլացման հետևանք) կանխելու համար օգտագործվում են լվացող միջոցներ, որոնք չեն պարունակում թթվածնային և օպտիկական սպիտակեցնող նյութեր, ֆերմենտներ և այլ հավելումներ,

6) սպիտակեղենի ճերմակեցման համար օտագործվում է միջոցի ըստ ակտիվ քլորի 0,05-0,5% աշխատանքային լուծույթ: Դրանից ավելի բարձր խտության լուծույթները կարող են առաջացնել գունավոր գործվածքների գունաթափում,

7) միջոցի խտանյութը գործվածքի հետ շփման դեպքում կարող է վնասել այն,

8) աշխատանքային լուծույթի խտությունը և ազդեցության ժամանակները ներկայացված են աղյուսակներ 7-9-ում:

79. Նախնական թրջելու փուլում առանց տեսանելի աղտոտվածության սպիտակեղենի ախտահանման համար.

1) ձեռքային մշակման դեպքում սպիտակեղենն ամբողջությամբ ընկղմվում է միջոցի լուծույթի մեջ (50-60°C պայմաններում միջոցի լուծույթում սպիտակեղենի մշակումն իրականացնվում է կափարիչով փակ տարաներում),

2) պահպանվում է միջոցի ազդեցության ժամանակը (աղյուսակ 7),

3) միջոցի հետքերի հեռացման նպատակով սպիտակեղենը լվացվում է ջրով մինչև քլորի հոտի անհետանալը,

4) սպիտակեղենը լվացվում է ձեռքով կամ ավտոմատացված եղանակով օգտագործելով սինթետիկ լվացող միջոց: Ախտահանիչի հետքերի հեռացման հնարավորության բացակայության դեպքում իրականացվում է սպիտակեղենի լվացում լվացող միջոցի առանձին պատրաստված լուծույթում (առանձին տարայում) կամ սպիտակեղենի լվացում ավտոմատ տիպի լվացքի մեքենայում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպիտակեղենի լվացումն առանց պարզաջրելու ավելի արագ է առաջացնում մաշվածություն:

80. Ավտոմատացված լվացման դեպքում.

- 1) սպիտակեղենը տեղադրվում է լվացքի մեքենայի մեջ,
- 2) նախնական լվացման փուլում ավելացնվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի լուծույթ լվացքի մեքենայի օգտագործման հրահանգին համապատասխան,
- 3) ընտրվում է ախտածին մանրէների ոչնչացման համար պահանջվող նախնական լվացքի համապատասխան ռեժիմ (աղյուսակ 7),
- 4) իրականացնվում է նախնական լվացում՝ առանց լվացքի փոշի ավելացնելու՝ ընտրված ջերմային ռեժիմին համապատասխան ժամանակահատվածում,
- 5) նախնական լվացքի փուլի ավարտին իրականացվում է սպիտակեղենի պարզաջրում սառը ջրով,
- 6) պարզաջրելուց հետո իրականացվում է լվացում լվացող միջոցի օգտագործմամբ: Նախնական լվացումից հետո ախտահանիչ միջոցի մնացորդները հեռացնելու հնարավորության բացակայության դեպքում իրականացվում է մեքենայացված լվացում լվացող միջոցի օգտագործմամբ՝ ընտրված լվացքի ռեժիմով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպիտակեղենի լվացումն առանց պարզաջրելու ավելի արագ է առաջացնում մաշվածություն:

Աղյուսակ 7

Բժշկական կազմակերպությունների լվացքատներում տարբեր վարակների ժամանակ առանց տեսանելի աղտոտվածության սպիտակեղենի ախտահանումը նախնական թրջելու փուլում

	Մշակվող օբյեկտը և մշակման եղանակները
--	--------------------------------------

Վարակի էթիոլոգիա	Սպիտակեղեն					
	Թրջում, լվացում ձեռքային և ավտոմատացված եղանակով					
	Ջերմաստիճանը, աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի, % - ազդեցության ժամանակը, րոպե					
	18-20°C		35-40°C		50-60°C	
	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,025	30				
	0,05	20	0,025	30	0,025	20
	0,1	10	0,05	15	0,05	10
	0,25	5	0,1	10		
Վիրուսային	0,025	30				
	0,05	20	0,025	30	0,025	20
	0,1	10	0,05	15	0,05	10
	0,25	5	0,1	10		
Սնկային (կանիդոզներ)	0,05	20				
	0,1	10	0,05	15	0,05	10
	0,25	5	0,1	10		
Սնկային (դերմատոֆիթիա)	0,05	45				
	0,1	30	0,05	30	0,05	15
	0,25	15	0,1	20		
Սնկային (բորբոսասնկեր)	0,1	60	0,1	40	0,1	30
	0,25	30				
Տուբերկուլոզ	0,25	20	0,25	15	0,25	10
	0,5	15	0,5	10		

81. Առանց տեսանելի աղտոտվածության սպիտակեղենի ախտահանում / ճերմակեցում՝ հիմնական լվացման փուլում սինթետիկ լվացող միջոցների կրառմամբ (ախտահանում/ճերմակեցում, համակցված լվացման հետ մեկ փուլում) իրականացվում է կափարիչով փակ տարաներում: Մշակումն իրականացվում է աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներով.

1) պատրաստվում է լվացքի փոշու լուծույթ՝ կոնկրետ տվյալ տեսակի փոշու կիրառման հրահանգին համապատասխան,

2) պատրաստված լուծույթին ավելացվում է «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի խտանյութի պահանջվող քանակություն (աղյուսակ 1.2, սխեմա 1),

3) սպիտակեղենն ամբողջությամբ ընկղմվում է պատրաստված լուծույթի մեջ, պահպանելով ազդեցության ժամանակաը (աղյուսակ 8),

4) ազդեցության ժամանակի ավարտին իրականացվում է սպիտակեղենի լվացում,

5) լվացքի ավարտից հետո սպիտակեղենը լվացվում է լվացող միջոցի և ախտահանիչի հետքերի հեռացման նպատակով՝ մինչև քլորի հոտի անհետանալը:

82. Ավտոմատացված մշակման դեպքում նախնական լվացում չի իրականացվում: Լվացքի մեքենան ծրագրավորվում է միայն հիմնական լվացման փուլի համար՝ ախտածին մանրէների ոչնչացման համար պահանջվող ժամանակահատվածով (աղյուսակ 8).

1) սպիտակեղենը տեղադրվում է լվացքի մեքենայի մեջ,

2) լվացքի մեքենայի կիրառման հրահանգին համապատասխան հիմնական լվացման փուլում ապահովվում է ջրի, լվացող միջոցի և ախտահանիչ միջոցի հաջորդական օգտագործում,

3) լվացում (տվյալ դեպքում ախտահանման և ճերմակեցման հետ համակցված) ընտրված ջերմային ռեժիմին համապատասխան ժամանակահատվածում,

4) հիմնական լվացման փուլի ավարտին սպիտակեղենի պարզաջրում սառը ջրով:

Բժշկական կազմակերպությունների վաքքատներում տարբեր վարակների ժամանակ առանց տեսանելի աղտոտվածության սպիտակեղենի ախտահանումը սինթետիկ վաքող միջոցների հետ համակցված նախնական թրջելու փուլում

Վարակի էթիոլոգիա	Մշակվող օբյեկտը և մշակման եղանակները					
	Սպիտակեղեն					
	Թրջում, վաքում ձեռքային և ավտոմատացված եղանակով					
	Ջերմաստիճանը, աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի, % - ազդեցության ժամանակը, րոպե					
	18-20°C		35-40°C		50-60°C	
	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,025	30				
	0,05	15	0,025	20	0,025	10
	0,1	10	0,05	10	0,05	5
	0,25	5	0,1	5		
Վիրուսային	0,025	30				
	0,05	15	0,025	20	0,025	10
	0,1	10	0,05	10	0,05	5
	0,25	5	0,1	5		
Սնկային (կանիդոզներ)	0,05	15				
	0,1	10	0,05	10	0,05	10
	0,25	5	0,1	5		
Սնկային (դերմատոֆիթիա)	0,05	30				
	0,1	20	0,05	20	0,05	10
	0,25	10	0,1	15		

Սնկային (բորբոսասնկեր)	0,1	60	0,1	40	0,1	30
	0,25	30				
Տուբերկուլոզ	0,25	20	0,25	10	0,25	10
	0,5	15	0,5	5	0,5	5

83. Կենսաբանական նյութերով և ոչ օրգանական աղտոտիչներով աղտոտված սպիտակեղենը մշակվում է միջոցի ակտիվ քլորի բարձր պարունակությամբ լուծույթով, երկարացված ազդեցության ժամանակով: Աղտոտված սպիտակեղենի ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակներ 9,10-ում; աղտոտիչների բծերի թերի հեռացման հետևանքով սպիտակեղենի վրա դեղնության առաջացումը կանխելու նպատակով սպիտակեղենի մշակումն իրականացվում է լվացքի հիմնական փուլում ախտահանիչով և լվացման միջոցներով համակցված՝ համաձայն աղյուսակ 10-ում ներկայացված ռեժիմների:

84. Տեսանելի աղտոտվածությամբ սպիտակեղենի ախտահանումը/ճերմակեցումը նախնական թրջելու փուլում ձեռքային եղանակով իրականացվում է հետևյալ մեթոդով.

- 1) սպիտակեղենն ամբողջությամբ ընկղմվում է միջոցի լուծույթի մեջ, մշակումն իրականացնելով միայն կափարիչով փակվող տարաներում,
- 2) պահպանվում է աղյուսակ 9-ում ներկայացված ազդեցության ժամանակը,
- 3) ազդեցության ժամանակի ավարտին սպիտակեղենից հեռացվում են ախտահանիչի մնացորդները՝ մինչև քլորի հոտի վերանալը,
- 4) այնուհետև իրականացվում է լվացում (ձեռքային կամ ավտոմատացված) օգտագործելով սինթետիկ լվացող նյութեր: Ախտահանիչի մնացորդները հեռացնելու հնարավորության բացակայության դեպքում իրականացվում է սպիտակեղենի լվացում լվացող նյութի առանձին պատրաստված լուծույթում (ձեռքային լվացման դեպքում՝ առանձին տարայում) կամ սպիտակեղենի տեղափոխում ավտոմատ տիպի լվացքի մեքենա՝ անմիջապես «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-»-ով մշակելուց հետո, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպիտակեղենի լվացումն առանց պարզաջրելու ավելի արագ է առաջացնում մաշվածություն:

85. Ավտոմատացված եղանակով սպիտակեղենը մշակվում է հետևյալ փուլերով.

- 1) սպիտակեղենը տեղադրվում է լվացքի մեքենա,
- 2) համաձայն լվացքի մեքենայի կիրառման հրահանգի, նախնական լվացման փուլում ավելացվում է ախտահանիչ միջոց,
- 3) լվացքի մեքենայի համար ընտրվում է ախտածին մանրէների ոչնչացման համար պահանջվող ժամանակահատվածով նախնական լվացման ռեժիմ (աղյուսակ 9),
- 4) իրականացվում է նախնական լվացք «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի լուծույթով՝ առանց լվացման միջոցի օգտագործման ընտրված ռեժիմին համապատասխան ժամանակահատվածում,
- 5) նախնական լվացման փուլի ավարտին լվացքի մեքենան իրականացնում է սպիտակեղենի պարզաջրում սառը ջրով,
- 6) պարզաջրելու փուլի ավարտից հետո կատարվում է սպիտակեղենի լվացում լվացման միջոցի օգտագործմամբ: Ախտահանիչի մնացորդները հեռացնելու հնարավորության բացակայության դեպքում իրականացվում է սպիտակեղենի լվացում առանձին պատրաստված լվացող նյութի լուծույթում (ձեռքային լվացման դեպքում՝ առանձին տարայում) կամ սպիտակեղենի տեղափոխում ավտոմատ տիպի լվացքի մեքենա՝ անմիջապես «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ով մշակելուց հետո, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպիտակեղենի լվացումն առանց պարզաջրելու ավելի արագ է առաջացնում մաշվածություն:

Աղյուսակ 9

Բժշկական կազմակերպությունների լվացքատներում տարբեր վարակների ժամանակ տեսանելի աղտոտվածությամբ սպիտակեղենի ախտահանումը նախնական թրջելու փուլում

Վարակի էթիոլոգիա	Մշակվող օբյեկտը և մշակման եղանակները
	Սպիտակեղեն
	Թրջում, լվացում ձեռքային և ավտոմատացված եղանակով
	Ջերմաստիճանը, աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի,% - ազդեցության ժամանակը, րոպե

	18-20°C		35-40°C		50-60°C	
	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,05 0,1 0,25	30 15 10	0,05 0,1	20 10	0,5	5
Վիրուսային	0,05 0,1 0,25	30 15 10	0,05 0,1	20 10	0,1	5
Սնկային (կանիդոզներ)	0,05 0,1 0,25	30 15 10	0,05 0,1	20 10	0,1	5
Սնկային (դերմատոֆիթիա)	0,1 0,25	30 20	0,1	15	0,1	10
Սնկային (բորբոսասնկեր)	0,25	60	0,25	30	0,25	20
Տուբերկուլոզ	0,25 0,5 1,0	30 20 10	0,25 0,5	20 15	0,25 0,5	15 10

86. Տեսանելի աղտոտվածությամբ սպիտակեղենի հիմնական վազման փուլում ախտահանում/ճերմակեցում՝ սինթետիկ վազող միջոցների հետ համատեղ ձեռքային եղանակով իրականացվում է կափարիչով փակ տարաներում.

1) պատրաստվում է վազքի փոշու լուծույթ՝ կոնկրետ տվյալ տեսակի փոշու կիրառման հրահանգին համապատասխան,

2) սպիտակեղենը թրջվում է լվացող միջոցիլ ուծույթի մեջ 5-10 րոպե տևողությամբ՝ առկա չորացած աղտոտիչների քայքայման և թարմ աղտոտիչների մեծ մասի լուծման նպատակով,

3) սպիտակեղենով լվացող հեղուկին ավելացվում է նախապես 1:3 հարաբերությամբ նոսրացված «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի լուծույթ (աղյուսակ 1.2, սխեմա 1),

4) պահպանվում է ազդեցության ժամանակը (համաձայն աղյուսակ 10-ի),

5) սպիտակեղենը լվացվում է;

6) լվացքն ավարտվելուց հետո սպիտակեղենը պարզաջրվում է՝ լվացող և ախտահոնող միջոցների մնացորդները հեռացնելու նպատակով մինչև քլորի հոտի անհետանալը:

87. Ավտոմատացված եղանակով մշակելու համար.

1) սպիտակեղենը տեղավորվում է լվացքի մեքենա, որի կիրառման հրահանգին համապատասխան ապահովվում է ջրի, լվացող միջոցի և ախտահանիչ միջոցի հաջորդական օգտագործումը հիմնական լվացման փուլում: Եթե լվացքի մեքենան ապահովված է հեղուկ լվացման միջոցների մատակարարման լրացուցիչ համակարգով, ապա ախտահանիչ միջոցն ավելացվում է անմիջապես լվացման փուլում՝ այն սկսվելուց 5-6 րոպե անց,

2) նախնական 5-6 րոպե տևողությամբ լվացող միջոցներով լվացքն ապահովվում է չորացած աղտոտիչների քայքայումը և թարմ աղտոտիչների մեծ մասի տարալուծումը: Տվյալ եղանակը հնարավորություն է ընձեռում մաքսիմալ կերպ բարձրացնել իրականացվող ախտահանման արդյունավետությունը,

3) լվացքի մեքենան նախնական և հիմնական լվացքի փուլերում ծրագրավորվում է ախտածին մանրէների ոչնչացման համար պահանջվող ժամանակին համապատասխան (աղյուսակ 10),

4) նախնական լվացքն իրականացվում է օգտագործելով սիթետիկ լվացող միջոց և «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)-ի լուծույթ՝ համաձայն ընտրված ջերմային ռեժիմի, տվյալ փուլում ապահովելով սպիտակեղենի ախտահանում/ճերմակեցում,

5) նախնական փուլի ավարտին մեքենան իրականացնում է պարզաջրում սառը ջրով,

6) պարզաջրման փուլն ավարտելուց հետո իրականացվում է լվացք՝ սինթետիկ լվացող միջոցի կիրառմամբ: Ախտահանիչի հետքերի լվացման հնարավորության բացակայության դեպքում իրականացվում է սպիտակեղենի լվացում լվացող միջոցի առանձին պատրաստված լուծույթում (առանձին տարայում) կամ սպիտակեղենի լվացում ավտոմատ տիպի լվացքի մեքենայում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպիտակեղենի լվացումն առանց պարզաջրելու ավելի արագ է առաջացնում մաշվածություն:

Աղյուսակ 10

Բժշկական կազմակերպությունների լվացքատներում տարբեր վարակների ժամանակ տեսանելի աղտոտվածությամբ սպիտակեղենի ախտահանումը սինթետիկ լվացող միջոցների հետ համակցված նախնական թրջելու փուլում

Վարակի էթիոլոգիա	Մշակվող օբյեկտը և մշակման եղանակները					
	Սպիտակեղեն					
	Թրջում, լվացում ձեռքային և ավտոմատացված եղանակով					
	Ջերմաստիճանը, աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի, % - ազդեցության ժամանակը, րոպե					
	18-20°C		35-40°C		50-60°C	
	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե	% ակտիվ քլորի	ըստ րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,025	45				
	0,05	20	0,025	30	0,025	20
	0,1	10	0,05	15	0,05	10
	0,25	5	0,1	10	0,1	5
Վիրուսային	0,025	45				
	0,05	20	0,025	30	0,025	20
	0,1	10	0,05	15	0,05	10
	0,25	5	0,1	10	0,1	5
	0,05	20				
	0,1	10	0,05	15	0,1	10

Սնկային (կանիդոզներ)	0,25	5	0,1	10		
Սնկային (դերմատոֆիթիա)	0,1 0,25	30 20	0,1	15	0,1	10
Սնկային (բորբոսասնկեր)	0,25	60	0,25	30	0,25	20
Տուբերկուլոզ	0,25 0,5 1,0	20 10 5	0,25 0,5	15 10	0,25	10

88. Բժշկական կազմակերպությունների ճաշարանի սպասքի (ափսեներ, գավաթներ, բաժակներ) և սպասքի պարագաների (պատառաքաղներ, գդալներ, դանակներ) ախտահանման ժամանակ առաջնորդվում են հետևյալ կանոններով, հաշվի առնելով նյութը, որից դրանք պատրաստված են.

- 1) չի իրականացվում տարբեր մետաղներից պատրաստված առարկաների համատեղ ախտահանում,
- 2) չի իրականացվում մետաղյա և ապակյա առարկաների ախտահանում երկարացված ազդեցությամբ լուծույթներով երկարացված ազդեցության ժամանակով,
- 3) նախքան ախտահանումը ճաշարանային սպասքը, այդ թվում՝ միանվագ, ազատվում է սննդի մնացորդներից,
- 4) միջոցի ծախսը 1 կոմպլեկտի (1 մարդուն պահանջվող սպասքի հավաքածո) համար կազմում է 2 լ,
- 5) միջոցով սպասքի ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 11-ում:

89. Առանց աղտոտվածության տեսանելի մաքուր սպասքն ամբողջությամբ ընկղմվում է միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, պահպանելով ազդեցության

Ժամանակը համաձայն աղյուսակ 10-ի, ապահովելով լուծույթի քանակությունն այնպես, որ լուծույթի շերտի հաստությունը սպասքի վրա լինի 1 սմ-ից ոչ պակաս:

90. Սննդի մնացորդներով կամ վարակի փոխանցման գործոն հանդիսացող կենսաբանական հեղուկներով աղտոտված սպասքի արդյունավետ ախտահանումն ապահովելու նպատակով այն նախապես մանրակրկիտ մաքրվում է: Մաքրված սպասքն ամբողջությամբ ընկղմվում է միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, պահպանելով ազդեցության ժամանակը համաձայն աղյուսակ 11-ի (լուծույթի քանակությունն ապահովվում է այնպես, որ լուծույթի շերտի հաստությունը սպասքի վրա լինի 1 սմ-ից ոչ պակաս):

Աղյուսակ 11

Բժշկական կազմակերպությունների ճաշարաններում տարբեր վարակների ժամանակ սպասքի ախտահանումը ռեժիմները

Վարակի էթիոլոգիա	Մշակվող օբյեկտ, մշակման եղանակները, աղտոտվածության աստիճանը			
	Բժշկական կազմակերպությունների ժաշարանների սպասք			
	Թրջում, լվացում ձեռքային եղանակով			
	Առանց տեսանելի աղտոտվածության		Տեսանելի աղտոտվածությամբ (սննդի մնացորդներ, նախնական մաքրումից հետո)	
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի,% - ազդեցության ժամանակը, րոպե			
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,05	20		
	0,1	10	0,1	15
	0,25	5	0,25	10
	0,5	3	0,5	5
Վիրուսային	0,05	20		
	0,1	10	0,1	15
	0,25	5	0,25	10
	0,5	3	0,5	5

Սնկային (կանիդոզներ)	0,05	20		
	0,1	10	0,1	15
	0,25	5	0,25	10
	0,5	3	0,5	5
Սնկային (դերմատոֆիթիա)	0,25	10	0,25	15
	0,5	5	0,5	10
Սնկային (բորբոսասնկեր)	0,25	20	0,25	30
	0,5	10	0,5	20
			1,0	10
Տուբերկուլոզ	0,25	15	0,25	20
	0,5	10	0,5	15
	1,0	5	1,0	10

91. Բժշկական նշանակության արտադրատեսակների մշկումը միջոցով ճիշտ իրականացնելու, ինչպես նաև մշակման ընթացքում նատրիումի հիպոքլորիդի քայքայող ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախքան ախտահանելը բոլոր բժշկական արտադրատեսակներ տարրանջատվում են համաձայն հետևյալ դասակարգման.

1) ըստ բժշկական ապրանքների տեսակների. լաբորատոր (լաբորատոր գործիքներ և սպասք, ասեղներ, մազանոթներ, առարկայական ապակիներ, սրվակներ, այդ թվում վակուումային), մելանժերներ, հաշվիչ խցիկներ, պիպետներ, ծայրադիրներ, ռետինե տանձիկներ, բալլոններ և այլն; վիրաբուժական և ատամնաբուժական գործիքներ; դիալիզի սարքի, ջրամատակարարման համակարգի, դիալիզային հեղուկի ֆիլտրերի կոնտուրներ;

2) ըստ բժշկական արտադրատեսակների պատրաստման նյութի. մետաղ, պինդ պլաստիկ, ապակի; ռետին, սիլիկոն և այլ ծակոտկեն նյութեր;

3) ըստ կառուցվածքի. պարզ կառուցվածքով առանց խոռոչների և խողովակների; բարդ կառուցվածքով, որոնք ունեն խոռոչներ և խողովակներ, ինչպես նաև կողպեքային հատվածներ;

4) ըստ աղտոտվածության աստիճանի. առանց տեսանելի աղտոտվածության և տեսանելի աղտոտվածությամբ:

92. Միջոցով բժշկական գործիքների ախտահանումն իրականացվում է հաշվի առնելով որոշ կանոններ, մշակվող օբյեկտների և միջոցի առանձնահատկությունները.

1) քլորպարունակող միջոցները ագրեսիվ են բժշկական գործիքների մեծամասնության բաղկացուցիչ մասերի նկատմամբ,

2) քլորպարունակող միջոցներով բժշկական գործիքների մշակումն իրականացվում է միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ բժշկական կազմակերպությունում ավելի քիչ ագրեսիվ և ավելի թանկարժեք ախտահանիչ միջոցների բացակայության դեպքում կամ բժշկական կազմակերպության սահմանափակ ռեսուրսներով աշխատելու դեպքում;

3) էնդոսկոպիկ սարքավորումների (ճկուն և կոշտ էնդոսկոպների) մշակումը քլորպարունակող միջոցով արգելված է;

4) քանի որ միջոցի աշխատանքային լուծույթները չունեն օրգանական աղտոտվածությունները ֆիկսող ազդեցություն, դրանք կարող են կիրառվել բժշկական գործիքների նախնական ախտահանման համար;

5) միջոցի կազմում առկա ոչ իոնաձին մակերեսային ակտիվ նյութերը և հիմնային բաղադրամասերն ապահովում են աշխատանքային լուծույթների վնասող հատկությունները և դրանք կարող են օգտագործվել վնասման հետ մեկ փուլում համակցված ախտահանման համար;

6) մետաղական գործիքների կոռոզիան կանխելու նպատակով արգելվում է մեկ տարայում իրականացնել տարբեր մետաղներից պատրաստված գործիքների մշակում: Ցածր որակի բարդ կառուցվածքով բժշկական գործիքները կարող են պատրաստված լինել տարբեր մետաղներից (օրինակ, գործիքի հիմքը՝ չժանգոտող

մետաղից, իսկ միացնող բաղադրամասերը՝ տարբեր մետաղների համաձուլվացքից):
Նման գործիքները խորհուրդ չի տրվում մշակել քլորպարունակող միջոցներով;

7) մետաղական գործիքների մշակումն իրականացվում է ըստ ակտիվ քլորի պարունակության միջոցի աշխատանքային լուծույթների 0,5%-ով 20 րոպեից ոչ ավել պահաժամով;

8) ապակյա արտադրատեսակների պղտորումը, ռետինե արտադրատեսակների մակերեսին ճաքերի առաջացումը կանխելու նպատակով մշակումն իրականացվում է ըստ ակտիվ քլորի պարունակության միջոցի 0,5% աշխատանքային լուծույթներով 20 րոպեից ոչ ավել պահաժամով;

9) քանի որ նատրիումի հիպոքլորիդի մնացորդները ավտոկլավացման ժամանակ կարող են վնասվել գործիքները, դրանց մակերեսին առկա մնացորդային քլորի արագ չեզոքացման համար առաջնային վացումը (չեզոքացումը) իրականացվում է նատրիումի թիոսուլֆատի (1 լ ջրին ավելացնելով 0,1% 1 գ. նատրիումի թիոսուլֆատ) լուծույթով 1-5 րոպե տևողությամբ;

10) վերջնական վացումն իրականացվում է հոսող ջրի մեծ քանակությամբ ոչ պակաս քան 3 րոպե տևողությամբ մինչև քլորի հոտի անհետանալը;

11) սույն հրահանգում ներկայացված ազդեցության ռեժիմները արգելվում է գերազանցել, երկարացված ազդեցությամբ ռեժիմներով ախտահանումը անխուսափելիորեն առաջացնում է մշակվող գործիքների վնասում: Բժշկական գործիքների ախտահանման համար պահանջվող աշխատանքային լուծույթների խտությունները և ազդեցության ժամանակը ներկայացված են աղյուսակ 12-ում:

93. Առանց տեսանելի աղտոտվածության բժշկական գործիքների ախտահանումն իրականացվում է հետևյալ կերպ.

1) նախապես մաքրված կամ մաքուր գործիքները ամբողջությամբ ընկղմվում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, պահպանում ազդեցության ժամանակը, ապահովելով լուծույթի շերտի հաստությունը գործիքների վրա 1 սմ-ից աչ պակաս;

2) խորխի հավաքման թքամաններն ախտահանվում են միայն լաբորատոր սպասքի համար նախատեսված ռեժիմներով, որը արդյունավետ է տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ;

3) առանց տեսանելի աղտոտվածության բժշկական գործիքների ախտահանման համար նախատեսված աշխատանքային լուծույթները կարող են կիրառվել բազմակի, բայց միայն ոչ ավել, քան 24 ժամվա ընթացքում (աշխատանքային լուծույթները փոխվում են օրը մեկ անգամից ոչ պակաս հաճախականությամբ) :

94. Տեսանելի աղտոտվածությամբ բժշկական գործիքների ախտահանումն իրականացվում է երկու հաջորդաբար տարաներում հետևյալ կերպ.

1) առաջին տարան նախատեսված է լվացման համար: Ներքին խողովակներով գործիքների լվացման ժամանակ խողովակներով անցկացվում է 5-10 մլ աշխատանքային լուծույթ արյան մնացորդների և այլ կենսաբանական հեղուկների մնացորդները հեռացնելու համար;

2) երկրորդ տարան նախատեսված է ախտահանման ազդեցությունը պահպանելու համար: Գործիքներն ամբողջությամբ ընկղմվում են լուծույթի մեջ, խուսափելով օդային խցանների առաջացումից; բարդ կառուցվածքով գործիքներն ընկղմվում են քանդված վիճակում; կողպեքավոր մասեր ունեցող գործիքներն ընկղմելիս, մի քանի աշխատանքային շարժում է արվում, որպեսզի լուծույթը ներթափանցի դժվարահասանելի հատվածներ: Հորիզոնական դիրքով ընկղմելիս, ապահովվում է լուծույթի ներթափանցումը խոռոչներ այնպես, որ լուծույթի շերտի հատությունը գործիքների վրա լինի 1 սմ-ից ոչ պակաս:

3) խորխի հավաքման թքամաններն ախտահանվում են միայն տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ռեժիմով,

4) հատուկ ուշադրություն է դարձվում արյունով և այլ կենսաբանական հեղուկներով աղտոտված լաբորատոր սպասքին (կապիլյարներ, սրվակներ, այդ թվում վակուումային, մեկանժերներ և այլն), դրանք ախտահանվում են միջոցի աշխատանքային լուծույթներով գործող իրավական ակտերի պահանջների համաձայն;

5) արգելվում է արյան չախտահանված մակարդուկի հեռացումը սրվակից՝ արյան մակարդուկներով սրվակներն ընկղմվում են աշխատանքային լուծույթի մեջ զգուշությամբ, անատոմիական պինգետի մեկ ոտիկը մտցնելով սրվակի մեջ և թեքությամբ ընկղմում այնպես, որ աշխատանքային լուծույթով լցվի ամբողջ խոռոչը: Ճիշտ ընկղմելու դեպքում օդի պղպղջակներ չեն առաջանում և սրվակն իջնում է

տարայի հատակ: Բոլոր պարագաներն ընկղմելուց հետո պինցետը ևս ախտահանվում է, միանվագ օգտագործման պարագաները խոտանվում են;

6) տեսանելի աղտոտվածությամբ գործիքների մշակման համար նախատեսված աշխատանքային լուծույթներն օգտագործվում են միանվագ:

95. Նախնական ախտահանումից հետո լաբորատոր և վերքային մակերեսների կամ լորձաթաղանթների հետ շփված բժշկական գործիքները և պարագաները ենթարկվում են նախամանրէազերծման մշակման և մանրէազերծման:

96. Քանի որ «Յանիլիս (նատրիումի հիպոքլորիդ 6,25 %)» միջոցի մնացորդները կարող են քիմիական ռեակցիայի մեջ մտնել այլ նյութերի հետ և նվազեցնել դրանց արդյունավետությունը, նախամանրէազերծման մշակման համար ոչ քլոր պարունակող լուծույթներ օգտագործելու դեպքում պահանջվում է ախտահանված բժշկական գործիքները մանրակրկիտ լվանալ խմելու ջրով և միայն դրանից հետո ընկղմել լվացող հեղուկի մեջ, խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում օգտագործել չեզոքացնող նյութ (նատրիումի թիոսուլֆատի լուծույթ):

97. Միջոցի աշխատանքային լուծույթներն օգտագործվում են նատրիումի հիպոքլորիդի ազդեցության նկատմամբ կայուն նյութերից պատրաստված դիալիզի սարքերի, ջրի մատակարարման համակարգերի, դիալիզի հեղուկի ֆիլտրերի կոնտուրների մաքրման (այդ թվում կենսաբանական թաղանթի հեռացման) համար, որն իրականացվում է արտադրողի հրահանգներին համապատասխան:

98. Միջոցի մնացորդները հեռացվում են ջրի միջոցով նույնպես արտադրողի հրահանգներին համապատասխան ոչ պակաս քան 5 րոպե տևողությամբ:

99. Վերջնական մաքրման արդյունավետությունը ստուգվում է կրախմալ և կալիումի յոդիդ պարունակող հատուկ զգայորոշիչ զուլերի միջոցով:

Աղյուսակ 12

Տարբեր վարակների ժամանակ բժշկական արտադրատեսակների (վիրաբուժական, ատամնաբուժական և այլ գործիքների, լաբորատոր սպասքի և լաբորատորիաների այլ բժշկական արտադրատեսակների) ախտահանման ռեժիմները

	Մշակվող օբյեկտ, կառուցվածքային առանձնահատկություններ, պատրաստման նյութ, աղտոտվածության աստիճան
--	--

Վարակի էթիոլոգիա	Բժշկական նշանակության արտադրատեսակներ (վիրաբուժական, ատամնաբուժական և այլ գործիքներ, այդ թվում դիալիզի սարքի, ջրամատակարարման համակարգի, դիալիզային հեղուկի ֆիլտրերի կոնտուրներ)			
	Մշակման եղանակը – ընկղմում			
	Առանց տեսանելի աղտոտվածության կամ նախապես մաքրված առարկաներ հարթ ոչ ծակոտկեն նյութերից (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ), պարզ կառուցվածքով (առանց խողոչների, խողովակների, կողպեքային մասերի)	1) Ցանկացած նյութից բարդ կառուցվածքով առարկաներ (ունեն ճողովակներ, խողոչներ և կողպեքային մասեր) 2) Տարբեր իրեր և առարկաներ ծակոտկեն նյութերից (ռետին և այլ պոլիմերայի նյութեր), գործվածք, որոնց որոկյալ մաքրումը դժվարեցված է 3) Տեսանելի աղտոտվածությամբ ցանկացած առարկաներ		
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ ակտիվ քլորի,% - ազդեցության ժամանակը, րոպե			
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից)	0,05	20		
	0,1	10	0,1	15
	0,25	5	0,25	10
	0,5	3	0,5	5
Վիրուսային	0,025	45		
	0,05	20	0,1	15
	0,1	10	0,25	10
	0,25	5	0,5	5
	0,5	3		
Սնկային (կանիդոզներ)	0,05	20		
	0,1	10	0,1	15
	0,25	5	0,25	10
	0,5	3	0,5	5
Սնկային (դերմատոֆիթիա)	0,25	10	0,25	15
	0,5	5	0,5	10

Տուբերկուլոզ	0,25	15	0,25	20
	0,5	10	0,5	15
	1,0	5	1,0	10

100. Ախտահանման գորգերը և ախտահանիչ պատնեշները ներծծվում են միջոցի ըստ ակտիվ քլորի 0,025 % աշխատանքային լուծույթով: Լուծույթի ծավալը կախված է մշակվող պարագաների չափերից և ներկայացված է այդ պարագաների կիրառման հրահանգում:

101. Աշխատանքային լուծույթի փոխելու հաճախականությունը կախված է գորգի օգտագործման հաճախականությունից (միջինում 3 օրը մեկ անգամ): Ախտահանիչ պատնեշների մշակման եղանակները մանրամասն նկարագրված են արտադրողի կողմից դրանց կիրառման հրահանգներում:

102. Ներհիվանդանոցային վարակների հայտնաբերման դեպքում, ներառյալ բազմադեղորայքակայուն ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները, իրականացվում է բոլոր այն օբյեկտների (ներառյալ սենքերի արտաքին մակերեսները, կահավորանքի և խնամքի պարագաները, բժշկական արտադրատեսակները, կենսաբանական հեղուկները, բժշկական թափոնները) ախտահանում, որոնց հետ շփում է ունեցել հիվանդ պացիենտը՝ աղյուսակ 13-ում ներկայացված ռեժիմներով:

103. Ընթացիկ ախտահանման ժամանակ իրականացվում է հիվանդի կենսաբանական նյութերի և ներհիվանդանոցային միջավայրի բոլոր օբյեկտների, որոնց հետ շփում է ունեցել հիվանդը համակարգված ախտահանում (բժշկական նշանակության արտադրատեսակների, հիվանդի խնամքի պարագաների, սպասքի, սպիտակեղենի, սենքերի արտաքին մակերեսների, այդ թվում կահույքի և սարքավորումների, Ե և Ե դասի բժշկական թափոնների), դեզինսեկցիա և դետատիզացիա:

104. Ընթացիկ ախտահանման ժամանակ իրականացվում է բուժանձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակում, հիվանդի և անձնակազմի մաշկային ծածկույթների ամբողջական կամ մասնակի մշակում, ներարկման դաշտի մշակում:

Ներհիվանդանոցային վարակների հարուցիչներով, այդ թվում ժամանակակից բազմադեղորայքակայուն հոսպիտալային (կլինիկական) շտամներով բաղարկված տարբեր օբյեկտների ախտահանմա ռեժիմները

Ախտահանման օբյեկտ	Վարակի ծագումնաբանությունը				Մշակման եղանակը
	Գրամ (-) բակտերիաներ		Գրամ (+) բակտերիաներ		
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ «ակտիվ քլորի», %- ախտահանման պահաժամը, րոպե				
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	
Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ առանց օրգանական աղտոտվածության	0,25	5	2,0	5	Սրբում, ոռոգում
Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ օրգանական աղտոտվածությամբ	1,0	5	2,0	5	Սրբում, ոռոգում
Դեղատնային և լաբորատոր սպասք (փորձանոթներ, կաթոցիկներ, Պետրիի թասիկներ, առարկայական ապակիներ, ռետինե տանձիկներ, փողրակներ և այլն), սպասքի վաճման համար օգտագործվող առարկաները	0,25	5	2,0	5	Թրջում
Ճաշարանային սպասք, այդ թվում միանվագ օգտագործման՝ առանց սննդի մնացորդների	0,25	5	2,0	5	Թրջում
Ճաշարանային սպասք, այդ թվում միանվագ օգտագործման՝ սննդի մնացորդներով	1,0	5	2,0	5	Թրջում
Բամբակյա կամ սինթետիկ գործվածքից սպիտակեղեն և հագուստ օրգանական աղտոտվածությամբ	1,0	10	2,0	10	Թրջում

Բժշկական արտադրատեսակներ (այդ թվում կտրող-ծակող) ներառյալ ատամնաբուժական գործիքներ, ատամնատպվածքներ և հիվանդի խնամքի պարագաներ	0,25	5	2,0	5	Թրջում սրբում
Տականոթներ, այդ թվում՝ բիրթաղանթի պարունակության կասկածով	1,0	5	2,0	5	Թրջում
Սանիտարատեխնիկական սարքավորումներ	0,25	10	2,0	5	Սրբում, ոռոգում
Մաքրման պարագաներ և նյութեր	1,0	10	2,0	10	Թրջում

105. Միջոցի աշխատանքային լուծույթներն օգտագործվում են հատուկ վտանգավոր վարակների օջախներում (խոլերայի, տուլարեմիայի, բրուցելոզի, ժանտախտի), ինչպես նաև սպորների տեսքով հարուցիչների, ներառյալ սիբիրյան խոցի առկայության դեպքում տարբեր օբյեկտների ախտահանման նպատակով: Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

Հատուկ վտանգավոր վարակներով (ժանտախտ, խոլերա, բրուցելոզ), ինչպես նաև մանրէների սպորայի ձևերով բաղարկված օբյեկտների ախտահանման ռեժիմները

Ախտահանման օբյեկտ	Վարակի ծագումնաբանությունը								Մշակման եղանակը
	Ժանտախտ		Խոլերա, տուլարեմիա , բրուցելոզ		Մանրէների սպորներ ² (այդ թվում անաէրոբ վարակների և սիբիրյան խոցի)				
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ «ակտիվ քլորի»- %, ախտահանման պահաժամը- րոպե								
					Անաէրոբ վարակներ		Սիբիրյան խոց		
					% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	
	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե					

Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ	0,1	20	0,2	60	0,5 1,0	30 20	0,5 075	60 30	Շփում կամ ոռոգում
Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ օրգանական աղտոտվածությամբ	0,5	20	0,5	60	0,5 1,0	60 30	0,75 1,0	60 30	Շփում կամ ոռոգում
Սանիտարատեխնիկական սարքավորումներ	0,1	20	0,3	60	0,5 1,0	30 20	0,5	60	Շփում կամ ոռոգում
Մաքուր սպասք ³	0,0 5	30	0,05	60	0,5 1,0	20 15	0,5	30	Ընկղմում
Սպասք սննդի մնացորդներով	0,1	20	0,1	60	0,5 1,0	45 20	-	-	Ընկղմում
Լաբորատոր սպասք	0,0 5	30	0,05	60	0,5 1,0	20 15	0,5 0,75	60 30	Ընկղմում
Սպիտակեղեն առանց օրգանական աղտոտվածության ³	0,0 5	30	0,05	60	0,5 1,0	20 10	0,5	30	Թրջում
Սպիտակեղեն օրգանական աղտոտվածությամբ	0,1	20	0,1	60	0,5 1,0	30 20	-	-	Թրջում
Խնամքի պարագաներ, խաղալիքներ	0,1	20	0,2	60	0,5 1,0	20 15	-	-	Շփում կամ ոռոգում
Կոռոզիայի նկատմամբ կայուն մետաղներից, ապակուց, պլաստմասից, ռետինից պատրաստված բժշկական արտադրատեսակներ	0,1	20	0,1	60	0,5 1,0	45 20	0,5 0,75	60 30	Ընկղմում կամ թրջում
Մաքրման նյութեր ³	0,1	20	0,1	60	0,5	45	1,0	60	Թրջում
Լաթեր	0,1	20	0,2	60	0,5	45	-	-	Թրջում
Կենսաբանական նյութ									
-արյուն	0,1	20	0,1	60	0,7 5	60	0,75	60	Օգտագործվող լուծույթի նոսրացում կրկնակի ծավալով
-մեղ	0,1	20	0,3	60	0,7 5	60	0,75	60	
-կղանք	0,1	20	0,3	60	0,7 5	60	0,75	60	

-խորիս	0,1	20	0,3	60	0,7 5	60	0,75	60	
--------	-----	----	-----	----	----------	----	------	----	--

106. Բժշկական կազմակերպությունների (քաղաքային, կլինիկական, մասնագիտացված, գերատեսչական, գիտա-հետազոտական, ուսումնական ինստիտուտների կազմում գործող (այդ թվում ինֆեկցիոն բաժանմունքներ, մաշկավեներաբանական, հակատուբերկուլոզային և սնկաբանական) հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ (այդ թվում մեծահասակների, մանկական, ատամնաբուժական), դիսպանսերներ, շտապբուժօգնության ծառայության, արյան փոխներարկման կայանների, հիվանդի երկարատև խնամքի կազմակերպություններ, բժշկական պրոֆիլի ուսումնական և գիտա-հետազոտական ինստիտուտների, դեղատներում, դեղագործական արդյունաբերություններում, առողջարանային կազմակերպություններում (առողջարաններ, հանգստյան տներ), սանիտարա-կանխարգելիչ կազմակերպություններում, դատաբժշկական փորձաքննության կազմակերպություններում, բժշկական լաբորատորիաներում (այդ թվում անատոմիական, ախտաբանաանատոմիական, բիոքիմիական, միկրոկենսաբանական, ֆիզիոլոգիական, ինչպես նաև ախտաճնության 3-4 խմբի միկրոօրգանիզմների հետ աշխատող (բացառությամբ հատուկ վտանգավոր վարակների), բժշկական օգնություն ցուցաբերող մասնավոր կազմակերպություններ) թափոնների ախտահանումն իրականացվում է համաձայն գործող իրավական ակտերի պահանջների:

107. Միջոցի աշխատանքային լուծույթներն օգտագործվում են հետևյալ տեսակի թափոնների ախտահանման համար.

- 1) կենսաբանական հեղուկներով աղտոտված մետաղական, ապակյա, ռետինից, պլաստմասից պատրաստված միանվագ օգտագործման բժշկական արտադրատեսակներ,
- 2) կենսաբանական հեղուկներով աղտոտված վիրակապական նյութ, միանվագ օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստ և գործվածքից այլ արտադրատեսակներ,

3) ոչ պիտանի մանրէային և վիրուսային պատրաստուկներ, այդ թվում կենդանի պատվաստանյութ (ԲՑԺ) և անատոքսիններ, ինչպես կանխարգելիչ պատվաստումներից առաջացած նաև նյութերի մնացորդները (ամպուլաներ, սրվակներ, ներարկիչներ, ասեղներ, սկարիֆիկատորներ, բամբակյա վիրախծուծներ, անձեռոցիկներ, ձեռնոցներ),

4) հեղուկ թափոններ, լվացման ջրեր,

5) կենսաբանական նյութեր՝ խորխ, ձևավորված ֆեկալիաներ, խառնված մեզիկամ ջրի հետ 1:5 հարաբերությամբ, հեղուկ ֆեկալիաներ, փսխման զանգված, սննդի մնացորդներ,

6) արյուն (այդ թվում մակարդուկ) և կենսաբանական հեղուկներ, խառնված արյան հետ՝ մեզ, բկանցքի ողողման հեղուկ,

7) չարորակ նորագոյացությունների բջիջներ պարունակող նյութեր (բջջաբանական հետազոտություններից հետո առաջացած նյութեր, վիրակապական նյութ, քայքայվող ուռուցքներից առաջացած նյութ),

8) տնտեսական կառուցվածքներ, աղբի հավաքման տարաներ,

9) բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացի ինֆեկցիոն (այդ թվում մաշկա-վեներաբանական) և հակատուբերկուլոզային) A դասի ոչ ինֆեկցված թափոնների (պացիենտի կենսաբանական հեղուկներ, ինֆեկցված հիվանդների հետ շփում չունեցող) հավաքման բազմանվազ օգտագործման կուտակիչներն ամեն օր լվացվում և ախտահանվում են ընկղմելու, սրբելու կամ ոռոգման եղանակներով,

10) բժշկական արտադրատեսակների մաքրման ժամանակ ախտահանման հետ մեկ փուլում համակցված նախամանրէազերծման մշակման համար օգտագործված լվացող և ախտահանող միջոցների աշխատանքային լուծույթների մնացորդները, որոնք համարվում են պոտենցիալ վարակված,

11) բժշկական արտադրատեսակների մաքրման ժամանակ (առանց մեկ փուլում համատեղման) ախտահանիչ միջոցների հետ աշխատելիս առաջացած լվացման ջրերը,

108. Ե և B դասի թափոններն ախտահանվում են նախքան միանվազ օգտագործման փաթեթների մեջ տեղադրելը դրանց առաջնային հավաքման վայրում միջոցի

աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելու եղանակով՝ այդ նպատակով առանձնացված հատուկ տարայում:

109. Հատուկ ուշադրություն է դարձվում մեծ քանակությամբ կենսաբանական հեղուկներ պարունակող պինդ և հեղուկ թափոնների մշակմանը:

110. Տարբեր տիպի թափոնների և դրանց հավաքման տարաների ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակներ 15, 16-ում:

111. Դ դասին պատկանող ցիտոստատիկների և գենոտոկսիկ դեղամիջոցների հավաքումը, ժամանակավոր պահպանումը առանց քիմիական չեզոքացման չի իրականացվում: Չեզոքացման ենթակա են լուծույթների պատրաստման և օգտագործման ընթացքում առաջացող թափոնները (օգտագործված սրվակներ, ներարկիչներ, ներերակային ներարկման համակարգեր, սկարիֆիկատորներ, դեղամիջոցների մնացորդներով աղտոտված բամբակյա գնդիկներ և այլն): Չեզոքացումն իրականացվում է անմիջապես աշխատատեղում, նման թափոնների առաջացումից անմիջապես հետո:

112. Այդ դասի թափոնները չեզոքագցվում են միջոցի ըստ ակտիվ քլորի 0,5 % աշխատանքային լուծույթի մեջ 30 րոպե տևողությամբ ընկղմելու եղանակով:

113. Չեզոքացման համար օգտագործվում են կափարիչով փակվող պլաստիկից կամ էմալապատ (առանց էմալի վնասման) տարաներ: Չեզոքացված թափոնները ենթակա են հետագա օգտահանման որպես Դ դասի թափոններ:

114. Չփոքացման ենթարկվում են աշխատատեղերի մակերեսները, որտեղ իրականացվել են ցիտոստատիկ և գենոտոկսիկ դեղամիջոցների լուծույթների պատրաստման աշխատանքներ: Մակերեսների մշակումն իրականացվում է սրբելու եղանակով միջոցի ըստ ակտիվ քլորի 0,5 % աշխատանքային լուծույթով 30 րոպե ազդեցության ժամանակով: Ազդեցության ժամանակի ավարտին միջոցի հետքերը մակերեսներից հեռացնելու նպատակով իրականացվում է խոնավ մաքրում:

115. Ցիտոստատիկ և գենոտոկսիկ դեղամիջոցների թափոնների չեզոքացումն իրականացվում է արտաձիգ պահարանում՝ մաշկային ծածակույթների, աչքերի և շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ:

116. Օգտագործման համար ոչ պիտանի (պիտանելիության ժամկետն անց լինելու, սառցային շղթայի ռեժիմի խախտման, ամպուլաների ամբողջականության խախտման, դրանց վրա պիտակավորման բացակայության, ամպուլաների պարունակության արտաքին տեսքի փոփոխության, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներից հետո բացաժ ամպուլներում պատրաստուկի նստվածքի առաջացման պատճառով) պատվաստանյութերը և անատոքսինները ենթակա են պարտադիր խոտանման սահմանված կարգով:

117. Վարակազերծման համար օգտագործվում են պլաստիկ կամ էմալպատ տարաներ: Պատվաստումների իրականացման ժամանակ առաջացած բացված ամպուլները, ֆլակոնները, ներարկիչները, ասեղները, սկարիֆիկատորները, բամբակյա գնդիկները հավաքվում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Լուծույթի մեջ ամպուլները և սրվակները մանրացվում են (օրինակ, կորնցանգով), որից հետո պահպանվում է ազդեցության ժամանակը:

118. Բոլոր տեսակի պատվաստանյութերի վարակազերծման համար օգտագործվում է միջոցի 0,25 % լուծույթ 30 րոպե ազդեցության ժամանակով: Պատվաստանյութերի վարակազերծման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 16-ում:

119. Վարակազերծումից հետո կենդանի պատվաստանյութերով բաղարկված նյութերը մանրէազերծվում են ֆիզիկական կամ քիմիական եղանակով: Ապակու մնացորդներն օգտահանվում են սահմանված կարգով:

120. Պատվաստանյութերի և անատոքսինների ոչնչացման բոլոր տեսակի աշխատանքներն իրականացվում են հատուկ արտահագուստով (խալաթ, գոգնոց, ձեռնոցներ) և անհատական պաշտպանության միջոցներով (դիմակ կամ ռեսպիրատոր, ակնոցներ):

Աղյուսակ 15

Բժշկական կազմակերպություններում բժշկական թափոնների հավաքման տարաների ախտահանման ռեժիմները

Մշակվող օբյեկտ	Մշակվող օբյեկտի նյութը,	Վարակի ծագումնաբանությունը	
		Մանրէային, վիրուսային,	Մանրէային, վիրուսային, սնկային (կանդիդոզներ,

	աղտոտվածության աստիճանը	սնկային (կանդիդոզներ) ¹		դերմատոֆիտիաներ), տուբերկուլոզ ²	
		Լուծույթի խտությունը ըստ «ակտիվ քլորի», %- ախտահանման պահաժամը, րոպե			
		% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մշակման եղանակը՝ շփում, ոռոգում կամ ընկղմում					
A, B, B դասի թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարաներ, կենսաբանական հեղուկներով չաղտոտված	Պլաստիկից, մետաղից և այլ հարթ, ոչ ծակոտկեն նյութերից պատրաստված պարզ կառուցվածքով տարաներ, այդ թվում տեսանելի աղտոտվածությամբ	0.05	30	0.25	15
		0.1	15	0.5	10
		0.25	10	1.0	5
		0.5	5		
Մշակման եղանակը՝ ընկղմում					
Հիվանդի արտաթորանքների հավաքման տարաներ, լաբորատոր սպասք և մակերեսներ, որտեղ հավաքվել է կենսաբանական նյութը		-	-	0.5	15
				1.0	10
Խորխից մաքուր թքամաններ		-	-	0.5	15
				1.0	10
Խորխից մաքուր թքամաններ					
Աղբահավաք սարքավորումներ, աղբարկղեր	Պլաստիկից, մետաղից և այլ հարթ, ոչ ծակոտկեն նյութերից պատրաստված պարզ կառուցվածքով տարաներ, այդ թվում տեսանելի աղտոտվածությամբ	0.5	30	0.25	15
		0.1	15	0.5	10
		0.25	10	1.0	5
		0.5	5		

Աղյուսակ 16

Բժշկական կազմակերպություններում առաջացող թափոնների ախտահանման
ռեժիմները

Մշակվող օբյեկտ		Վարակի ծագումնաբանությունը
----------------	--	----------------------------

	Մշակվող օբյեկտի նյութը, աղտոտվածության աստիճանը	Մանրէային, վիրուսային, սնկային (կանդիդոզներ) ¹		Մանրէային, վիրուսային, սնկային (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ), տուբերկուլոզ ²		
		Լուծույթի խտությունը ըստ «ակտիվ քլորի», %- ախտահանման պահաժամը, րոպե				
		% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե	
Մշակման եղանակը՝ ընկղմում						
Կենսաբանական հեղուկներով աղտոտված ³ միանվագ օգտագործման առարկաներ	Մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից պատրաստված մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ	0,025	45	0,25	10	
		0,05	20			
		0,1	10			
		0,25	5			
	Վիրակապական նյութեր, միանվագ օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստը և գործվածքից պատրաստված այլ արտադրատեսակներ	0,05	30	0,1	30	
		0,1	15	0,25	20	
		0,1	10	0,5	10	
		0,25				
Պատվաստանյութեր վիրուսային և մանրէային, այդ թվում կենդանի (ներառյալ ԲՅԺ), անատոքսիններ ⁴	Պրեպարատներով կամ պրեպարատի մնացորդներով սրվակներ, միանվագ օգտագործման ասեղներ, ներարկիչներ, սկարիֆիկատորներ, բամբակյա տամպոններ, պատվաստումներից հետո առաջացած անձեռոցիկներ	0,1	60	0,25	30	
		0,25				30

Մշակման եղանակը՝ մանրակրկիտ խառնում

Կենսաբանական հեղուկներ	Հեղուկ թափոններ, լվացման ջրեր	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	30	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	60
	Հիվանդի կենսաբանական նյութ, խորխ, ձևավորված կղանք՝ խառնված մեզի և ջրի հետ 1:5 հարաբերությամբ, ջրիկ կղանք, փսխման զանգվածներ	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	30	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	60
	Արյուն և արյան հետ խառնված կենսաբանական հեղուկներ	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	30	Խառնել միջոցի խտանյութի հետ 1:0,5	60
	Սննդի մնացորդներ	Խառնել միջոցի 0,1 %-ոց լուծույթի հետ 1:1	30	Խառնել միջոցի 0,1 %-ոց լուծույթի հետ 1:1	30
	Մեզ, հեղուկ բերանի խոռոչի ողողումից հետո	1 լիտրին 15 մլ խտանյութ	30	1 լիտրին 40 մլ խտանյութ	30
Չարորոկ ուռուցքների բջիջներ պարունակող, կենսաբանական նյութեր	Ցիտոլոգիական հետազոտություններից առաջացած մնացորդներ, վիրակապական նյութեր, քայքայվող ուռուցքներից մասեր	0,25	15	-	-
Ախտահանիչ նյութերի օգտագործված աշխատանքային լուծույթներ, պոտենցիալ վարակված, որոնք օգտագործվել են գործիքների նախամանրէազերծման մշակման և ախտահանման համար, ինչպես նաև լվացման ջրերը, որոնք առաջացել են	Քիմիական և կենսաբանական աղտոտման մնացորդային քանակներ պարունակող ջրային լուծույթ՝	1 լիտրին 15 մլ խտանյութ	15	1 լիտրին 40 մլ խտանյութ	30

գործիքների մշակման այդ փուլերում					
-------------------------------------	--	--	--	--	--

121. Թռչնաբուծական ֆաբրիկաներում հավկիթի սանիտարական մշակումն իրականացվում է մեքենայացված կամ ձեռքային եղանակով: Վնասված կեղևով հավկիթը մշակման չի ենթարկվում:

122. Մեքենայացված եղանակով մշակման դեպքում հավկիթը միջադիրներից տեղափոխվում է սարքի փոխադրիչի վրա և անցնում հետևյալ փուլերը՝ դիտարկում, լվացում, պարզաջրում, ախտահանում և կրկին պարզաջրում:

123. Մշակման ենթակա հավկիթը դիտարկվում է միջադիրներով, տեխնիկական խոտանի համար նախատեսված տարաներ նետելով վնասված կեղևով հավկիթը: Խոտանվածի փոխարեն միջադիրների վրա տեղադրվում է չվասված կեղևով հավկիթ, լրացնելով բոլոր խորշերը:

124. Հավկիթով միջադիրները ձեռքով տեղադրվում են բեռնաթափման սարքի անիվավոր փոխադրիչի վրա, որը դրանք փոխանցում է դիտարկման գոտի, որտեղ խոտանը փոխարինվում է պիտանի (նախապես դիտարկված) հավկիթով:

125. Լվացումն իրականացվում է 2 րոպե տևողությամբ անիվավոր փոխադրիչի լվացման խցիկում, որտեղ կեղևի մակերեսը ենթարկվում է մեխանիկական ազդեցության նեյլոնից խոզանակներով, որի ընթացքում հավկիթը թրջվում է $38\pm 2^{\circ}\text{C}$ լվացող հեղուկով: Որպես լվացող հեղուկ օգտագործվում է կաուստիկ սոդայի 0,2% լուծույթ, կալցինացված սոդայի 0,5% լուծույթ կամ միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1% լուծույթ:

126. Հավկիթի կեղևի ախտահանումն իրականացվում է միջոցի ըստ ակտիվ քլորի 0,2% լուծույթով $20\pm 2^{\circ}\text{C}$ պայմաններում, մակերեսի պարզաջրումն իրականացվում է ջրմուղի ջրով 10 վայրկյան տևողությամբ:

127. Ձեռքով սանիտարական մշակման ժամանակ հավկիթը դիտարկվում է, առանձնացնելով տեխնիկական խոտանը, սննդային ոչ լիարժեք հավկիթը և տեսանելի մաքուր կեղևով հավկիթը աղտոտվածից:

128. Աղտոտված կեղևով հավկիթը արկղերով, պլաստմասե միջադիրներով կամ այլ տարայով տեղադրվում է վաննաներում ցանցերի վրա՝ 10 բույս տնտեսությամբ $28 \pm 2^\circ$ պայմաններում լվացող հեղուկում թրջելու նպատակով: Որպես լվացող հեղուկ օգտագործվում է կաուստիկ սոդայի 0,2% լուծույթ, կալցինացված սոդայի 0,5% լուծույթ կամ միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1% լուծույթ:

129. Տեսանելի մաքուր կեղևով և թրջելուց և լվանալուց հետո հավկիթը ուղարկվում է ախտահանման, որն իրականացվում է ընկղմելով միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1% լուծույթի մեջ 5 բույս տնտեսությամբ հատուկ փոխադրիչի միջոցով կամ ձեռքով:

130. Պահանջվող ժամանակի ավարտին հավկիթով տարան հանվում է, ողողվում 10 բույս տնտեսությամբ և տեղադրվում ցանցերի վրա 15-20 բույս տնտեսությամբ, որից հետո փոխանցվում է հավկիթ կոտրելու բաժանմունք կամ հանձնվում պահպանման ոչ ավել, քան 12 օր տնտեսությամբ 0°C մինչև 20°C և 85-88% օդի հարաբերական խոնավության պայմաններում:

131. Ճաշատեսակների պատրաստման համար օգտագործվող հավկիթի մշակումն իրականացվում է հատուկ առանձնացված վայրում մակնշված տարաներում համաձայն գործող իրավական ակտերի պահանջների:

132. Տեսանելի աղտոտվածությամբ կեղևով հավկիթը թրջելու համար օգտագործվում են սահմանված կարգով պաշտոնապես գրանցված և թույլտվություն ունեցող միջոցներ, օրինակ, կալցինացված սոդայի 0,5% լուծույթ, կաուստիկ սոդայի 0,2% լուծույթ կամ միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1% լուծույթ՝ $28 \pm 2^\circ\text{C}$ պայմաններում ոչ պակաս քան 10 բույս տնտեսությամբ:

133. Թրջելուց հետո հավկիթը մաքրվում է խոզանակներով ցնցուղի տակ $18 \pm 2^\circ\text{C}$ ջրով և տեղափոխվում սանիտարական մշակման:

134. Առանց տեսանելի աղտոտվածության և թրջելուց հետո տեսանելի աղտոտվածությամբ հավկիթը.

1) լվացվում է լվացող հեղուկով, օգտագործելով սահմանված կարգով պաշտոնապես գրանցված և թույլտվություն ունեցող միջոցներ,

2) ողողվում է հոսող սառը ջրով և ախտահանվում ընկղմելով միջոցի ըստ ակտիվ քլորի 0,1% լուծույթի մեջ 5 բույս տնտեսությամբ,

3) ողողվում է հոսող սառը ջրով,

4) մաքուր հավկիթը տեղադրվում է մաքուր մակնշված տարայի մեջ:

135. Հավկիթի մակերեսից միջոցի մնացորդների լիարժեք հեռացման աստիճանը որոշվում է ողողման ջրերում հիմնայնության առկայությամբ / բացակայությամբ:

136. Միջոցի լուծույթով հավկիթը մշակելուց և պարզաջրելուց հետո մնացորդային հիմնայնության հսկողությունն իրականացվում է ունիվերսալ զգայորոշիչ թեստի միջոցով ընկղմելով այն ողողման ջրերի մեջ և հետո այն դնելով մշակվող օբյեկտի մակերեսին:

137. Մակաբուծային հիվանդությունների հարուցիչներով (նախակենդանիների ցիստերով, հելմինթների և սրատուտի ձվիկներով և թրթուրներով) բաղարկված կենցաղային իրերի, խաղալիքների, սենքերի, լաբորատոր սպասքի և սարքավորումների վարակազերծումն իրականացվում է միջոցի աշխատանքային լուծույթներով գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

138. Մակաբուծային հիվանդությունների հարուցիչներով (նախակենդանիների ցիստերով, հելմինթների և սրատուտի ձվիկներով և թրթուրներով) բաղարկված օբյեկտների և մակերեսների վարակազերծումն իրականացվում է միջոցի 0,2% աշխատանքային լուծույթով 45 րոպե տևողությամբ կամ 0,3% լուծույթով 30 րոպե տևողությամբ:

139. Վարակազերծումն իրականացվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

1) Սենքերի արտաքին մակերեսները, կահույքը, սանիտարա-տեխնիկական սարքավորումները, ծորակները, դռների բռնակները մշակվում են սրբելու կամ ցողելու եղանակով: Ախտահանման ավարտին միջոցի հետքերը մակերեսներից հեռացնելու համար իրականացվում է խոնավ մաքրում, սենքն օդափոխվում է,

2) կոշտ խաղալիքները (ռետինե, պլաստմասե և փայտյա), տականոթները, սպասքը, մաքրման պարագաները ընկղմվում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, ախտահանման ավարտին ողողվում են հոսող ջրով և չորացվում,

3) փափուկ մակերեսները և փափուկ խաղալիքները մանրակրկտորեն մաքրվում են փոշեկուլով և մշակվում միջոցի լուծույթով թրջված խոզանակներով, պահպանում ազդեցության պահանջվող ժամանակը, որից հետո սենքն օդափոխվում է:

4) Կենսաբանական թափոնները (այդ թվում խորխով, մեզով տարաները և այլն) լցվում են միջոցի 0,3% լուծույթով 1:2 հարաբերությամբ, պահպանում ազդեցության պահանջվող ժամանակը (30 րոպե), այնուհետև օգտահանվում,

5) օգտագործված առարկայական ապակիները, պիպետները, սրվակները, ապակյա ձողերը, քիմիական բաժակները և այլն աշխատանքային օրվա ընթացքում հավաքվում են միջոցի աշխատանքային լուծույթով լցված տարայի մեջ,

6) սարքերի (ցենտրիֆուգերի, մանրադիտակների, սառնարանների և այլն) մշակումն իրականացվում է սրբելու եղանակով:

140. Միջոցի լուծույթներով տրանսպորտային միջոցների ախտահանման համար կիրառվում է խոնավ մեխանիկական եղանակ, սրբելու եղանակով մակերեսների մշակման դեպքում միջոցի ծախսը կազմում է 100 մլ/մ² :

141. Յողելու եղանակով մշակումն իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ, միջոցի ծախսը հեղացրիչի կիրառման դեպքում կազմում է 300 մլ/մ² կամ 150 մլ/մ² կախված հեղացրիչի մակնիշից:

142. Վարակիչ հիվանդներին տեղափոխող սանիտարական տրանսպորտը մշակվում է խոնավ մեխանիկական եղանակով (ցողում, որից հետո սրբում չոր լաթով) հեղացրիչի օգնությամբ:

143. Մեքենայի մշակումը սկսվում է դռան արտաքին մակերեսից, այնուհետև ցողվում է հատակը, առաստաղը, պատգարակը, պատերը և նորից հատակը:

144. Մեքենան ցաղելիս ուշադրություն է դարձվում բոլոր մակերեսները լուծույթով հավասարաչափ ծածկելուն, հատկապես աղտոտված (հատակ, պատգարակ և այլն) մակերեսներին:

145. Մեքենայում արյան հետքերի և կենսաբանական հեղուկների առկայության դեպքում դրանք ախտահանվում են տեղում; կենսաբանական նյութերով լցված տարաները տեղադրվում են ավելի մեծ չափերով տարայի մեջ և ախտահանվում համապատասխան վարակի ախտահանման ռեժիմի համաձայն:

146. Սանիտարական տրանսպորտի ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 18-ում: Անհայտ էթիոլոգիայի վարակների դեպքում ախտահանումն

իրականացվում է վիրուսային վարակների ախտահանման համար նախատեսված ռեժիմներով:

147. Մեքենայի մետաղական մասերի կոռոզիայից խուսափելու նպատակով ախտահանումից հետո դրանք սրբվում են մաքուր չոր լաթով: Հնարավորության դեպքում մակերեսներին առկա նատրիումի հիպոքլորիդի մնացորդները չեզոքացնելու նպատակով ջրով վերջնական լվացումից և սրբելուց առաջ մետաղական մասերը մշակվում են նատրիումի թիոսուլֆատի լուծույթով ցողելու կամ սրբելու եղանակով և պահպանում 1-5 րոպե ազդեցության ժամանակ:

148. Նատրիումի թիոսուլֆատի ծախսի նորման համընկնում է ախտահանման համար կիրառվող միջոցի ծախսի նորմային:

149. Կախված տրանսպորտի ախտահանման համար կիրառվող աշխատանքային լուծույթի խտությունից, նատրիումի թիոսուլֆատի լուծույթների պատրաստման սխեմաները ներկայացված են աղյուսակ 19-ում: Օրինակ, եթե մակերեսը մշակվել է ըստ ակտիվ քլորի միջոցի 0,25% լուծույթով 100 մլ/մ² ծախսի նորմայով, ապա չեզոքացումն իրականացվում է նույն քանակությամբ (100 մլ/մ²) նատրիումի թիոսուլֆատի 1,66 % (166 գ. 10 լ. ջրին) լուծույթով:

150. Սննդամթերք տեղափոխող ավտոտրանսպորտի պարբերական մշակումն իրականացվում է սրբելու կամ ցողելու եանակով՝ մանրէների ոչնչացման ռեժիմով: Ախտահանումից հետո մակերեսները լվացվում են և չորացվում:

Աղյուսակ 17

Տարբեր վարակների ժամանակ սանիտարական տրանսպորտի ախտահանման ռեժիմները

Վարակի ծագումնաբանությունը	Մշակվող օբյեկտի նյութը, աղտոտվածության աստիճանը	
	Ավտոմեքենայի արտաքին և ներքին մակերեսներ	
	Առանց տեսանելի ախտոտվածության	Տեսանելի ախտոտվածությամբ (կենսաբանական հեղուկներ)
	Մշակման եղանակը՝ ոռոգում, շփում	
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ «ակտիվ քլորի», %- ախտահանման պահաժամը, րոպե	

	% ըստ ակտիվ քլորի	րոպե	% ըստ ակտիվ քլորի	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	0,05	30	0,05	45
	0,1	15	0,1	20
	0,25	10	0,25	15
	0,5	5	0,5	10
	1,0	3	1,0	5
Վիրուսային	0,05	30	0,05	45
	0,1	15	0,1	20
	0,25	10	0,25	15
	0,5	5	0,5	10
	1,0	3	1,0	5
Սնկային (կանդիդոզներ)	0,05	30	0,05	45
	0,1	15	0,1	20
	0,25	10	0,25	15
	0,5	5	0,5	10
	1,0	3	1,0	5
Սնկային (դերմատոֆիտիաներ)	0,25	20	0,25	30
	0,5	10	0,5	15
Սնկային (բորբոսներ)	0,25	30	0,25	60
	0,5	20	0,5	30
	1,0	10	1,0	20
Տուբերկուլոզ	0,25	20	0,25	30
	0,5	10	0,5	15
	1,0	5	1,0	10

151. Սոցիալական ոլորտի կազմակերպություններում (կոմունալ, մշակութային, կենցաղային օբյեկտներում, հանրային սննդի, սննդի արդյունաբերության, մթերային, դեղատնային կրպակների, մանկական, հանրակրթական կազմակերպությունների, հասարակական տրանսպորտի, մարդկանց մասսայական կուտակումների վայրերի)

ախտահանումն իրականացվում է մանրէային վարակների հարուցիչների ոչնչացման ռեժիմներին համապատասխան, համաձայն աղյուսակ 3-ի:

152. Սպորտային առողջարարական կազմակերպություններում (սպորտային համալի, լողավազան, ակվապարկ), սպասարկման ոլորտի կազմակերպություններում (բաղնիքներ, շոգեբաղնիքներ, գեղեցկության սրահներ և այլն) ախտահանումն իրականացվում է սնկային վարակների հարուցիչների ոչնչացման ռեժիմներին համապատասխան, համաձայն աղյուսակ 3-ի:

153. Օծանելիքա-կոսմետիկական, ոչ ստերիլ դեղամիջոցների արտադրության դեղագործական և բիոտեխնոլոգիական արդյունաբերության կազմակերպությունների C և D դասի մաքրության սենքերում ախտահանումն իրականացվում է մանրէային վարակների հարուցիչների ոչնչացման ռեժիմներին համապատասխան, համաձայն աղյուսակ 3-ի:

154. Դատա-բժշկական փորձաքննության կազմակերպություններում, դիահերձարաններում, ախտաբանա-անատոմիական ծառայությունների կազմակերպություններում, հուղարկավորության առարաղությունների կազմակերպման հաստատություններում ախտահանումն իրականացվում է վիրուսային վարակների հարուցիչների ոչնչացման ռեժիմներին համապատասխան, համաձայն աղյուսակ 3-ի: Դիերի տեղափոխման մեքենաները մշակվում են աղյուսակ 17-ում ներկայացված սանիտարական տրանսպորտի ախտահանման ռեժիմներով: Կենսաբանական հեղուկները և այլ կենսաբանական աղտոտիչները վարակազերծվում և հեռացվում են աղյուսակ 16-ում ներկայացված տեսանելի աղտոտվածությամբ մակերեսների և բժշկական թափոնների ախտահանման ռեժիմներով:

155. Ազատազրկման վայրերում (բանտեր, գաղութներ և այլն) մակերեսների և օբյեկտների ախտահանումն իրականացվում է աղյուսակ 3-ում ներկայացված տուբերկուլոզային վարակի ժամանակ պահանջվող ախտահանման ռեժիմներով :

156. Որոշ դեպքերում (օրինակ, շրջանցելով մաքրման կառույցները ձկնաբուծական տնտեսությունների ջրավազանների մեջ լցնելիս) ելնելով բնապահպանական պահանջներից կարող է կարիք առաջանալ նախքան թափելը չեզոքացնել միջոցի

օգտագործված աշխատանքային լուծույթներում պարունակվող նատրիումի հիպոքլորիդը:

157. Նատրիումի հիպոքլորիտ պարունակող հեղուկ թափոնների քիմիական չեզոքացման նպատակով օգտագործվում է նատրիումի թիոսուլֆատ ($\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$): Քիմիական չեզոքացումն իրականացվում է աղյուսակ 18-ում ներկայացված սխեմային համապատասխան:

158. Չեզոքացումը կատարվում է կափարիչով փակվող տարաներում լավ օդափոխվաղ սենքերում: Ռեակցիան կարող է ուղեկցվել ռեակցիոն խառնուրդի տաքացմամբ:

159. Չեզոքացումը կատարվում է հետևյալ կերպ.

- 1) միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ լցվում է նատրիումի թիոսուլֆատ՝ աղյուսակ 18-ում ներկայացված քանակությամբ,
- 2) լուծույթը խառնվում է մինչև նատրիումի թիոսուլֆատի լիարժեք լուծվելը,
- 3) կափարիչը փակվում է և պահպանվում 5-10 րոպե ազդեցության ժամանակը,
- 4) չեզոքացված լուծույթը թափվում է:

Աղյուսակ 18

Մաքրման կառույցները շրջանցելով բնական ջրավազանների մեջ լցնելիս միջոցի աշխատանքային լուծույթների չեզոքացման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտությունը		Անհրաժեշտ ծավալով աշխատանքային լուծույթի չեզոքացման համար նատրիումի թիոսուլֆատի քանակը (գր),		
Ըստ պատրաստուկի, զանգված %	Ըստ «ակտիվ քլորի», զանգված %	1 լիտր	5 լիտր	10 լիտր
0,8	0,05	3	17	33
1,6	0,1	7	33	67
3,2	0,2	13	67	133
4	0,25	17	83	166
4,8	0,3	20	100	200
8	0,5	33	166	333

16	1,0	67	333	666
32	2,0	133	666	1332
48	3,0	200	999	1997

160. Սնդիկի արտահոսքի դեպքում իրականացվում է դեմերկուրիզացիա (արտահոսքից անիմապես հետո), գործողությունները կախված են սնդիկով աղտոտվածության աստիճանից:

161. Սնդիկ պարունակող եզակի սարքերի ամբողջականության խախտման դեպքում (ջերմաչափ, լյումինեսցենտ լամպ) և սնդիկի չնչին քանակի թափվելու դեպքում սնդիկի մնացորդների հեռացումն իրականացվում է անձնակազմի կողմից ինքնուրույն՝ միջոցի օգտագործմամբ: Այդ նպատակով միջոցն օգտագործվում է առանց նոսրացման:

162. Նախքան աշխատանքները սկսելը բացվում են պատուհանները, անձնակազմը հագնում է ռետինե ձեռնոցներ և դիմակ:

1) մակերեսին առկա սնդիկի կաթիլները հավաքվում են միջոցով թրջված վրձինի, ռետինե տանձիկի կամ բամբակյա գնդիկի օգնությամբ: Հավաքման գործողությունները կատարվում են աղտոտվածության եզրերից դեպի կենտրոն, կաթիլները հավաքելով որպես գոգաթիակ օգտագործվող թղթի վրա, սկզբում հավաքելով խոշոր կաթիլները, իսկ փոքր կաթիլները միավորելով;

2) հավաքված կաթիլները տեղափոխվում են նախապես պատրաստված կափարիչով փակվող միջոցով լցված ապակյա տարայի մեջ, հատուկ ուշադրություն է դարձվում դժվարահասանելի հատվածներին, ճեղքերին և ծակոտկեն մակերեսներին, որոնց մաքրման համար օգտագործվում են ռետինե տանձիկ, կաչուն սպեղանի;

3) բոլոր կաթիլները հավաքելուց հետո իրականացվում է մակերեսի քիմիական մշակում, միջոցի ծախսի նորման ցողելու եղանակով մշակելու դեպքում կազմում է 150 մլ/մ²:

163. Բոլոր կաթիլները հավաքելուց հետո իրականացվում է մակերեսի ախտահանում միջոցի լուծույթով, ցողելու եղանակով մակերեսների ախտահանման դեպքում միջոցի ծախսի նորման կազմում է 150 մլ/մ²:

164. Մշակելիս ուշադրություն է դարձվում նատրիումի հիպոքլորիտի նկատմամբ օբյեկտների և մակերեսների կայունությանը: Լուծույթը լցվում է մակերեսին, կատարվում մշակում խոզանակով, հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որտեղ կարող է հավաքված լինել սնդիկը (փոսիկներ, ճեղքեր և այլն), թողնում 1,5-2 ժամ: Ազդեցության ժամանակի ընթացքում լուծույթը չորանալու դեպքում կրկին լցվում է լուծույթ:

165. Սնդիկային լամպից սնդիկի արտահոսքի դեպքում մակերեսի ախտահանման ժամանակը միջոցի լուծույթով ավելացվում է մինչև 1,5-2 օր: Նշված ժամանակահատվածում լուծույթը չորանալու դեպքում կրկին լցվում է լուծույթ:

166. Ազդեցության ժամանակի ավարտին մակերեսը լվացվում է տաք լուծույթով (4 % օճառ՝ սոդայի 5 % ջրային լուծույթի մեջ), որից հետո լվացվում մաքուր ջրով:

167. Սնդիկի հավաքման համար օգտագործված բոլոր պարագաները սնդիկի պարունակությամբ տարայի հետ միասին, ինչպես նաև սնդիկով աղտոտված իրերը և կոշիկները հեռացվում են սահմանված կարրգով որպես Դ դասի թափոն:

7. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

168. Միջոցի հետ աշխատելու չեն թույլատրվում 18 տարեկանից փոքր, ալերգիկ հիվանդություններ ունեցող անձինք, հղի կանայք և կերոկրող մայրեր:

169. Անհատական պաշտպանության միջոցներին (ԱՊՄ) են պատկանում.

1) մաշկային ծածակոյթներ պաշտպանության միջոցներ (պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ; ախտածին մանրէներից և հիմնային վնասող միջոցներից պաշտպանող կաուչուկից, լատեքսից կամ պոլիվինիլքլորիդից քիմիական նյութերի նկատմամբ կայուն ձեռնոցներ, ոտքերի պաշտպանիչ միանվագ օգտագործման միջոցներ կամ ռետինե երկարաճիտ կոշիկներ);

2) աչքերի պաշտպանության միջոցներ (ակնոցներ կամ քիմիական ախտահանիչների ցայտումներից և ախտածին մանրէներ պարունակող հեղուկների ցայտումներից պաշտպանող դիմակներ, վահանակներ, էկրաններ);

3) շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ (քիմիական ախտահանիչների գոլորշիներից և ախտածին մանրէներից պաշտպանող դիմակներ, «B» տիպի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М ունիվերսալ ռեսպիրատորներ):

170. Սրբելու, ընկղմելու և թրջելու եղանակներով օբյեկտների ախտահանումը, այդ թվում փոքր քանակությամբ արյան և այլ կենսաբանական հեղուկների արտահոսքի դեպքում, կարելի է իրականացնել մարդկանց ներկայությամբ առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների: Ախտահանումն իրականացնող անձնակազմի համար պարտադիր է մաշկային ծածկույթների պաշտպանության միջոցների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոցներ) օգտագործումը:

171. Ցողելու եղանակով օբյեկտների ախտահանումն իրականացվում է առանց պացիենտների ներկայության և օգտագործելով հետևյալ անհատական պաշտպանության միջոցներ՝ մաշկային ծածկույթների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոցներ), շնչառական օրգանների («B» տիպի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М ունիվերսալ ռեսպիրատորներ), աչքերի (հերմետիկ պաշտպանիչ ակնոցներ):

172. Կենսաբանական հեղուկների թափվածքներով մակերեսների ախտահանումն իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների ամբողջական հավաքածուով, որը ներառում է.

- 1) մաշկային ծածկույթների ԱՊՄ (պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ);
- 2) շնչառական օրգանների ԱՊՄ (պաշտպանիչ դիմակներ կամ ռեսպիրատորներ);
- 3) աչքերի ԱՊՄ (հերմետիկ ակնոցներ, վահանակներ, էկրաններ);
- 4) ոտքերի ԱՊՄ (միանվագ օգտագործման միջոցներ կամ ռետինե երկարաճիտ կոշիկներ):

173. Միջոցի հետ աշխատելուց հետո ձեռքերը և դեմքը լվացվում է ջրով օճառով: Ցողելու եղանակով միջոցն օգտագործելուց հետո սենքն օդափոխվում է:

174. Բժշկական արտադրատեսակների ախտահանման համար օգտագործվում են ամուր փակվող կափարիչներով տարաներ:

175. Մրջոցը չի օգտագործվում, խառնելով այլ ախտահանիչ միջոցների կամ կենցաղային քիմիայի միջոցների հետ: Այն օգտագործվում է խառնելով սինթետիկ լվացող միջոցների հետ՝ սույն հրահանգին համապատասխան:

176. Ակտիվ քլորի պարունակությամբ ախտահանիչ միջոցները չեն օգտագործվում խառնելով ամիակ պարունակող միջոցների հետ (ապակիների և պատուհանների մաքրման որոշ միջոցներ, որոշ ներկեր և լաքեր, մեզ և մեզ պարունակող կենսաբանական հեղուկներ և այլն):

177. Քլոր խարունակող միջոցները ամիակ պարունակող միջոցների հետ խառնելիս առաջանում են տոքսիկ գազանման քլորամիններ, որոնք շնչելու դեպքում կարող են առաջանալ հետևյալ տոքսիկ երևույթներ՝ հազ, հևոց, ցավ կրծքավանդակում, խրպոտություն, սրտխառնոց, արցունքահոսություն, թոքաբորբ:

178. Ակտիվ քլորի խմբի ախտահանիչները չեն օգտագործվում, խառնելով թթուներ կամ հիմքեր պարունակող միջոցների հետ (ապակիներ և պատուհաններ մաքրելու որոշ հեղուկներ, սպաքի ավտոմատ լվացման և պարզաջրման որոշ նյութեր, սանիտարատեխնիկական սարքավորումների մաքրման, աղային կուտակումների և ժանգի հեռացման համար նախատեսված միջոցների մեծամասնությունը, կոյուղու մաքրման որոշ միջոցներ):

179. Քլոր պարունակող միջոցները թթուների հետ խառնելիս անջատվում է գազային քլոր, որը ջրի մեջ լուծելիս, առաջանում է աղաթթու և հիպոքլորաթթու: Իսկ գազային քլորի առաջացումը, անգամ ցածր խտության, համարյա միշտ առաջացնում է աչքերի, կոկորդի, քթի լորձաթաղանթի գրգռում, հազ: Բացի այդ, կարող են դիտվել շնչառական խնդիրներ, արցունքահոսություն, աչքերի ծակոց:

180. Քլորի ավելի բարձր խտությունները կարող են առաջացնել ցավ կրծքավանդակում, դժվարացած շնչառություն, փսխում, թոքաբորբ: Քլորի շատ բարձր խտությունները կարող են առաջացնել մահ:

181. Քլորը կարող է ներթափանցել մաշկից, առաջացնելով ցավ, բորբոքում, այտուցվածություն և բշտիկներ: Աղաթթուն նաև առաջացնում է մաշկի, աչքերի, քթի, կոկորդի, բերանի խոռոչի այրվածքներ:

182. Ակտիվ քլորի խմբի ախտահանիչները չեն օգտագործվում կոյուղու մաքրման, այլ լվացող միջոցների, այդ թվում ճարպալուծ, դեզինսեկցիոն նյութերի հետ միաժամանակ կամ կիրառելուց անմիջապես հետո:

8. ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

183. Միջոցը քիչ վտանգավոր է, սակայն, ոռոգման եղանակով օգտագործելիս, լուծույթները անզգույշ պատրաստելիս, նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում հնարավոր է թունավորում, որն արտահայտվում է շնչառական օրգանների (չորություն, հազ), աչքերի (արցունքահոսություն) և մաշկային ծածկույթների (հիպերեմիա, այտուցվածություն) գրգռվածությամբ:

184. Նշվածի կապակցությամբ.

- 1) միջոցը աչքերի մեջ ցայտելու դեպքում աչքերը լվացվում են հոսող ջրով 10-15 րոպե տևողությամբ կամ սոդայի 2 % լուծույթով, այնուհետև կաթեցվում է սուլֆացիլ նատրիում 30 % լուծույթ, անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի,
- 2) մաշկի վրա ընկնելիս, այն լվացվում է ջրի մեծ քանակությամբ,
- 3) շնչառական օրգանների գրգռվածության նշանների դեպքում հիվանդը դուրս է բերվում մաքուր օդ, բերանը ողողում ջրով; հետագայում նշանակվում է ողողում կամ տաք խոնավ ինհալացիա նատրիումի հիդրոկարբոնատի 2 % լուծույթով; քթային շնչառության խանգարման դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել էֆեդրինի 2 % լուծույթ; կոկորդի ախտահարման դեպքում ցուցված է լռակյաց ռեժիմ և խմելու մեծ քանակությամբ հեղուկներ (սոդայով տաք կաթ, հանքային ջուր), անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի,
- 4) ստամոքս պատահական ներթափանցման դեպքում ցուցված է խմել մի քանի բաժակ ջուր և ընդունել 10-12 հաբ ակտիվացված ածուխ; չառաջացնել փսխում, անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

9. ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

185. Միջոցի տեղափոխումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով, համաձայն տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի համար գործող տեղափոխման կանոնների, որոնք երաշխավորում են արտադրատեսակի և տարայի պահպանումը:

186. Միջոցը պահվում է արտադրողի փակ տարաներով, խոնավությունից և արևի ճառագայթներից պաշտպանված, տաքացնող սարքերից և բաց կարկից հեռու,

կողմնակի անձանց և կենդանիների համար անհասանելի վայրում, +5°C մինչև +30°C պայմաններում:

187. Միջոցը թողարկվում է 200, 500, 1000 սմ³ տարողությամբ ամուր փակվող պոլիմերային տարաներով, 5, 10, 20, 40 դմ³ տարողությամբ կափարիչով ամուր փակվող պոլիմերային կանիստրներով, 50, 100, 200 դմ³ տարողությամբ պոլիմերային տակարներով:

10. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈՂՆԵՐ

188. Միջոցի որակի ցուցանիշների պահանջները և նորմերը ներկայացված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19

Ախտահոնղ լուծույթի որակի ցուցանիշները

Ցուսանիշի անվանում	Նորմա
Արտաքին տեսքը, գույնը, հոտը	Բաց դեղին գույնի կանաչ գունավորմամբ և բուրավետիչի հոտով թափանցիկ հեղուկ
Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	1,100±0,100
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը, pH	11,5±1,5
«Ակտիվ քլորի» («ա.ք.») զանգվածային բաժինը, %	6,25±0,5
Հիմքի զանգվածային բաժինը (NaOH-ի հաշվարկով), %	0,75±0,25

189. Միջոցի արտաքին տեսքն ու գույնը որոշվում է ակնադիտորեն, հոտը որոշվում է օրգանոլեպտիկ մեթոդով՝ համաձայն ԳՕՍՏ 29188.0 - 2014: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ լցվում է միջոցը մինչև կեսը և դիտարկվում արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

190. Հոտը որոշվում է օրգանոլեպտիկ:

191. Խտության որոշում 20°C ջերմաստիճանում: Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշվում է համաձայն ԳՕՍՏ 18995.1.

192. Միջոցի pH –ի որոշում 20°C ջերմաստիճանում:

1) Չափման միջոցներ, ռեակտիվներ և լուծույթներ.

– ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով,

– 50 սմ³ տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

193. Փորձարկման իրականացման համար բաժակի մեջ լցնվում է 30-40 սմ³ ծավալով միջոց և pH-մետրով չափվում pH՝ համաձայն դրա հրահանգի:

194. «Ակտիվ քլորի» զազվածային բաժնի որոշումն իրականացվում է տիտրման եղանակով: Սարքաքվորումներ, ռեակտիվներ, նյութեր.

1) 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գր կշռման առավելագույն սահմանով,

2) բյուրետ 1-3-2-25-0,1,

3) կոնաձև փորձանոթ Кн 1-250-24/29 տիպի՝ ըստ ԳՕՍՏ 25336,

4) չափիչ գլան 3-25-1՝ ըստ ԳՕՍՏ 1770,

5) թորած ջուր՝ ըստ ԳՕՍՏ 6709,

6) կալիումի յոդիդ «ք.մ.» մակնիշի՝ ըստ ԳՕՍՏ 4232, 10% զանգվածային խտությամբ լուծույթ, պատրաստումն ըստ ԳՕՍՏ 4517,

7) ծծմբական թթու «ք.մ.» մակնիշի՝ ըստ ԳՕՍՏ 4204, 1.0 Ն ջրային լուծույթ, պատրաստումն ըստ ԳՕՍՏ 25794.1,

8) քլորոֆորմ ըստ ԳՕՍՏ 20015,

9) նատրիում հիպոծծմբաթթվական (նատրիումի թիոսուլֆատ), 0.1 ն ջրային լուծույթ, պատրաստումն ըստ ԳՕՍՏ 25794.2:

195. Հետազոտության իրականացում: Կշռվում է մինչև 0,0005 գ ճշգրտությամբ 4.0-5.0 գ միջոց և տեղափոխվում կոնաձև փորձանոթի մեջ, ավելացվում է 10 սմ³ ջուր և 10 սմ³ կալիումի յոդիդի լուծույթ, խառնվում, ավելացվում 20 սմ³ ծծմբական թթու, նորից խառնվում, փակվում խցանով և 10 րոպե տեղադրվում մութ տեղ: 10 րոպե անց լուծույթի մեջ ավելացվում է 15 մլ քլորոֆորմ և արտադրված յոդ, տիտրվում է նատրիումի թիոսուլֆատի 0.1 ն լուծույթով՝ մինչև լուծույթի քլորոֆորմային շերտի գունաթափումը:

196. Արդյունքների մշակում: «Ակտիվ քլորի» զանգվածային բաժինը (W_{Cl}) տոկոսներով որոշվում է բանաձ (3)-ով: (3), 100 003545,0) (⊗⊗⊗ m V Cl W, որտեղ 003545 – 1 սմ³ նատրիումի թիոսուլֆատի լուծույթին համապատասխանող «ակտիվ

քլորի» զանգվածն է, 0,1 ն գ ճշգրիտ խտությամբ; V տիտրավորման վրա ծախսված ճշգրիտ 0,1 ն գ խտությամբ նատրիումի թիոսուլֆատի լուծույթի ծավալն է սմ³, m – նմուշի կշռվածք, գ: Արդյունքը հաշվում են բանաձև (3)-ով՝ կլորացնելով մինչև առաջին տասներորդական նշանը:

197. Որպես հետազոտության արդյունք ընդունվում է երկու զուգահեռ չափումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.2%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 3.0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում:

198. Ալկալիի զանգվածային բաժնի որոշում՝ վերահաշվարկված ըստ NaOH: Սարքաքվորումներ, ռեակտիվներ և լուծույթներ.

1) 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գր կշռման առավելագույն սահմանով,

1) բյուրեղ 1-3-2-25-0,1,

2) կոնաձև փորձանոթ КН 1-250-24/29 տիպի՝ ըստ ԳՕՍՏ 25336,

3) չափիչ գլան 3-25-1՝ ըստ ԳՕՍՏ 1770,

4) թորած ջուր՝ ըստ ԳՕՍՏ 6709,

5) ջրածնի պերօքսիդ (պերհիդրոլ)՝ ըստ ԳՕՍՏ 10929, 10% զանգվածային խտությունով լուծույթ, չեզոքացված ըստ ֆենոլֆտալեինի,

6) աղաթթու «ք.մ.» մականիշի՝ ըստ ԳՕՍՏ 3118-77, $C(HCl)=0.1$ մոլ/դմ³ խտությունով լուծույթ, պատրաստումն ըստ ԳՕՍՏ 25794.1,

7) էթիլ սպիրտ ռեկտիֆիկացված տեխնիկական՝ ըստ ԳՕՍՏ 18300 բարձր սորտի,

8) ֆենոլֆտալեին, լուծույթ էթիլ սպիրտի մեջ՝ ըստ ԳՕՍՏ 18300 կամ ըստ ԳՕՍՏ 17299՝ 1% զանգվածային բաժնով:

199. Հետազոտության իրականացում: Կշռվում է մինչև 0,0005 գ ճշգրտությամբ 5.0-7.0 գ միջոց և տեղափոխվում կոնաձև փորձանոթի մեջ, ավելացվում 10 սմ³ ջուր և զգուշորեն փոքր չափաբաժիններով ավելացվում 20-25 սմ³ ջրածնի պերօքսիդի լուծույթ, զգուշորեն խառնվում՝ խուսափելով ուժեղ գազանջատումից: Ուժեղ գազանջատման ավարտից 2-3 րոպե անց փորձանոթի մեջ ավելացվում է 2-4 կաթիլ ֆենոլֆտալեին և տիտրվում աղաթթվի լուծույթով՝ մինչև լուծույթի գունաթափումը:

200. Արդյունքների մշակում: Ալկալիի զանգվածային բաժինը, վերահաշվարկված ըստ NaOH (W_{NaOH}), տոկոսներով որոշվում է բանաձև (4)-ով, 100 004, 0) (m V NaOH W, որտեղ 0,004 - նատրիումի հիդրօքսիդի զանգված, որը համապատասխանում է ուղիղ 0.1 մոլ/դմ³ աղաթթվի լուծույթի 1 սմ³ -ին, գ, V – տիտրմանը ծախսված ուղիղ 0.1 մոլ/դմ³ խտությամբ աղաթթվի լուծույթի ծավալ, սմ³, m - նմուշի կշռվածք, գ: Արդյունքը հաշվում են բանաձևով՝ կլորացնելով մինչև առաջին տասներորդական նշանը:

201. Որպես հետազոտության արդյունք ընդունվում է երկու զուգահեռ չափումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.1%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4.0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում: